Հարտուցին Ամերիկա) և Աւստրալիա կամ Ովկիանիա։ Հինգ
աշխարհները մեծութեան կարգով այսպէս են. ամենամեծը՝
Ասիան, որ երկրիս բոլոր ցամաքի $\frac{1}{3}$ մասն է բռնում։ Երկրու-

Դր՝—Ա. Ա. Ամերիկա որ Ասիայից սակաւ ինչ փոքր է. Երրորդը՝—Ա. Վիրիկա. Գորրորդը՝ Եւրոպա, որ բոլոր ցամաքի $\frac{1}{2}$ մասն է բռնում (նա 5 անգամ փոքր է Ասիայից, և անգամ—Ամերիկայից, 3 անգամ—Աֆրիկայից և սակաւ ինչ մեծ է Աւստրալիայից.) և Հինգերորդը՝ Աւստրալիա, որ ամենափոքրն է:



Երկրիս երեսի փոքրիկ ցամաքները, որոնք շըջապատուած են ջրով, կոչվում են կղղիների: Կղղիների կազմուելու գլխաւոր պատճառներն են՝ ջուրը, հրահը և հենդանիները:

Ջրի ազգեցութիւնավ առաջացած կղզիները ցամաքի մօտ
են, մեծ են և երկայն. կարծվում է որ ջրի ալիքները շա-
րունակաբար խփելով ցամաքի ափերի նել մասերին, բաժա-
նել են այն կտորներն ցամաքից և դարձրել են կղզիներ, այս-
պիսիները կոչվում են նաև ցամաքային կղզիներ: Սրանց թէ մա-
կերևոյթի և թէ ներքին կաղմութիւնը, թէ կենդանիները և թէ
բուսականութիւնը նման է իրենց մօտ եղած մայր ցամաքներին
Նոքա բարեբեր են և յարմար են լինում բնակութեան: Այս-
պիսի մի քանի կղզիների վերայ կան մինչև անգամ մեծ տէ-
րութիւններ: (Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Անգլիեան, Սու-
մատրա կղզիները և այլն:)

Յամաքը երկրիս կեղեկի փոքր մասն է բռնում իսկ ջուրը՝
և մասրէ Յամաքի վերայ որ պատահում են երկրաշարժներ
և կան հանգած ու գործող հրաբուխներ, նոյնպէս ծովի մէջ
եղած են և լինում են երկրաշարժներ, կան գործող և հան-
գած հրաբուխներ ու երբեմն երբեմն էլ, պատահում են նոր
սկսուղ հրաբուխներ: Ծովի յատակում պատահած թէ երկրա-
շարժները և թէ հրաբուխները գոյացրել են և գոյացնում են
կղզիներ: Պատահում է, որ ծովի յատակի մի մասը ստորեր-
կրեայ հրային զօրութիւնից բարձրանում է ջրի մակերևոյթից
ու դառնում է կղզի, կամ թէ, երբեմն էլ մի հրաբուխին բե-
րան է բացվում, որ տեղից դուրս են ձգվում լաւա, քար և
այլն, որոնք միմեանց վերայ դիղուելով, ծովի մակերևոյթից
բարձրանում են և գոյացնում են կղզիներ:

Ծովերի մէջ ապրում են պօշտ կոչուած փոքրիկ փամ-
փշտանման կենդանիներ (գնդասեղի գլխի մեծութիւնով,) նոքա
կերակրվում են իրանցից առաւել փոքր արարածներով: Նոցա
կազմուածքը կրային է, երբ մեռնում են, նորանցից նորերն
են դուրս ընկնում և այսպէս շարունակաբար, շատ կարծ մի-
ջոցում, միմեանց վերայ դարսուելով՝ հասնում են մինչև ծովի
մակերևոյթին ու դառնում են կրային կարծը կղզիներ, որոնք
կոչվում են բնապային կամ էրբուխն կղզիներ, վասն զի նոքա
արտադրում են բուստ կամ էրբուլ Կօրալական կրային կղզիները
շը ջապատում են հրաբուխին ժայռերին և կամ թէ առանձ-
նապէս կղզիներ են կազմում, ջրից դուրս, բոլորաձև մանեա-
կով, որոնք կոչվում են տառլլ: Կամ թէ ծովի մակերևոյթից
յած ժայռեր են կազմում, որոնք երբեմն նաւագնացութեան
շատ արգելք են լինում:

Ամբեկայի Աքեմեան ափերը մօտ ծովային մի տեսակ թռչուններ
կան աղաւնուց սակաւ ինչ փոքր, որոնք անթիւ և անհամար երամով անցնե-
լով երեմն հեւսիսից հարաւ կամ հարաւից հեւսիս, թափում են ան-
ցած երկեների վերայ առատ աղբ, Հարաւային Ամբեկայի արեւմտեան կողմը
կան այս թռչունների աղբեց գոյացած շատ կղզիներ: Նորանցից ամենամեծն
է Զիւկո կղզին, որ 1¹/₂ վերստ երկայնութիւն և 3¹/₄ վերստ լայնութիւն

ունի: Ջինդայի վերայ աղբի հաստութիւնը 30 առժէնաշափ է: Այս աղբը
կոչվում է Գումաս, (Փերուացոց հասո բառից առնելով), որ թռչունի աղբ
ասել է: Գումանին հազարաւոր մարդկանց հաց է առիթ: Նոքա փորում և
վանառում են այն աղբը Ամերիկայի և Խերովայի կալուածա տէրեբին, որոնք
հորանով պարարտայնում են երենց հոլերը: Միայն Եւրոպա տարկում է
տարբէնը 80 միլիոն բուբուու գուման:

Այսպէսի կղզիներ էլ կան որ գետերն են կազմում, սարերից և գաշ-
տերեց, կեղեղների բերած առարկաներեց, Ենչպէս քար, փայտ, սատկած
կենդանիներ և այլն: Այս տեսակ կղզիները կոչվում են Հետիոնի: Նոքա
մէշ փոփոխվում են, այսինքն, երբեմն մեծանում են և երբեմն փրըսնում:
Նոքա գտնելում են զետերի, լճերի և կամ Ճահճեների մէջ:

Կան մի տեսակ շարժուն կղզիներ էլ որ ծառերի և
Ճահճային խոտերի արմատներից են դոյանում (տորֆի սկըզբ-
նական գոյացութիւն է). Նոքա փոքր կտորներով Հիւսիսային
Գերմանիոյ և Հոլանդիոյ Ճահճների և գետերի մէջ են գրտն-
վում: Հեղեղներին չեն դիմանում, պոկվում են գետի ափերից
կամ յատակից ու գնում են ջրի հոսանքով, երբեմն տանելով
իրենց վերայ ապրող սակաւաթիւ բնակիչները:

Կղզիները ծովերում կամ առանձին են լինում, կամ մի
քանիսը միասին խումբ են կազմում, կամ շատ խմբեր միմեանց
մօտ եկած արշեպէլուկ են կազմում ինում և կղզիներ, որոնք
շարքով են ընկած, մի քանի հարիւր և աւելի վերստ երկայ-
նութիւնով: Այս տեսակներն էլ կոչվում են պար կամ շար կղզեաց (ինչպէս Ալէութեան, Քուրիեան և այլն:) Գիտնական-
ները կարծում են, որ սորանք ժամանակով լեռնագոտի պիտի
եղած լինէին և թէ երկրիս բնական փոփոխութիւնների շնոր-
հիւ, ջուրը նոցա ստորոտը և կողքերը ծածկել է և միայն
գագաթներն ջրից դուրս են մնացել ու կազմել են այնպիսի
շղթայաձև կղզիներ:

Ի՞նչ մասերից է կազմուած Երկրիս մակերևոյթը: Նորա ո՞ր մասը շատ է:

Ցամաքը քանի կտոր է:

Մայր ցամաքները ի՞նչ անուններ ունեն:

Գանի՞ աշխարհ՝ են բաժանվում
ի՞նչու վեցերող՝ մայր ցամաքը աշխարհների կարգում չէ յետում
Մեծութեան կարգով աշխարհները ի՞նչպէս են հաշվում
Ի՞նչ բաներ են գոյացել կղզները
ի՞նչպէս են կազմուել ցամաքյին կղզները
նոցա ձեւ և դեբը ի՞նչպէս է:
Հրաբրդային կղզները ի՞նչպէս են գոյացել:
Ու կենդանիները կղզներ են կազմում և ի՞նչպէս
Այն կղզները ի՞նչու են կուտամ կօբալական կամ բստային:
Համեմատեցէ՞ք երեք գոյացութեամբ կղզները:
Ի՞նչ բան է գուանօտ ի՞նչ օգուտ է տալիս նա մարգուտ:
Հեղեղային կղզները ի՞նչպէս են գոյանում:
Հեւսիսային Գերմանիայի գետերում ի՞նչ տեսակ կղզներ են պատա-
հում:

ՅԱՄԱՔԻ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:
Այն գիծը որով ջուրը ցամաքի հետ կպչում է՝ կոչ-
վում է առ կամ եղբա։ Թէ կղզիների ափերը միաձե-
թէ մայր ցամաքների և թէ կղզիների ափերը միաձե-
և ուղիղ չեն, այլ շատ ծուռ և կարելի է ասել թէ օչազ-
են։ Այնպիսի ծոնութեան պատճառն թէ՝ ափերի յատկու-
թիւններն են և թէ՝ ծովի ալիքները։ Ափերի ծոնութիւնից
առաջանում են։

ա. Թուրքական՝ ցամաքի այն մասը, որ շատ տարածուելով
ծովի մեջ, երեք կողմից շրջապատվում է ջրով, իսկ մի կողմից
միայն կպած է լինում մեծ ցամաքին:

բ. Պարանոյ՝ ցամաքի այն նեղ շերտը, որով թերակղղին միանում է մեծ ցամաքի հետ։ Պարանոցով երկու ծովերը բաժնում են, իսկ երկու ցամաք՝ միանում են։

զ. Հիւանդանութեան կամ Գլուխ՝ լեռնային ավիի այն մասը, որ

շատ տարածուելով ջրի մեջ, իբրև լեռնագօտու շարունակու-
թիւն՝ սուր ու բարձր ծայրով է վերջանում:
Աղջ. Լեռուա՞ն, որ նոնն է ինչ որ հրուանդտնը, բայց
այն զանազանութիւնով որ լեզուակը աւելի երկայն է տա-
րածվում, լինում է նեղ և հարթ մակերևոյթով (ինչպէս
Արբաթը՝ Ազով ծովի և Սիվաշ ծահծի մեջ):



ՀԻՆԳ ԱՇԽԱԲՀՆԵՐԻ ՆՇԱՆԱԲՈՐ ԹԵՐԱԿՂՁԻՆԵՐԸ։
ա. Երոպայի թերակզբիներից նշանաւորներն են՝ Աքան-
դինաւիս, Ի. Թլւնդիս, Պիրենեան, Ապենինեան, Բալքանեան,

որի հարաւային մասը, կոչվում է Մօռա, և Ցարիկեան կամ Նըմի:

բ. Ասիոյ մէջ՝ Փոքր Ասիա, Արաբիա, Արևելեան Հրնդակաստան, Հնդկաշխն, որի հարաւային կողմում տարածվում է նեղ ու երկայն Մալաքա թերակղզին, Քօրէա և Կամչաթկա:

գ. Ափրիկայի ափերում բացի Բարբա թերակղզուց՝ ուրիշ թերակղզներ չեն ձևանում:

դ. Ամերիկայի նշանաւոր թերակղզներն են՝ Ալեասքա, Քալիֆորնիա, Խեքաթան, Ֆլորիդա և Լարրադօր:

և ե. Աւստրալիայի հիւսիսա—արևելեան ափում ձևացած է Եօրք թերակղզին:

Պարանոցներից նշանաւորներն են. Փանամա՝ որով երկու Ամերիկաները միանում են, Սուէզինը՝ որով Ափրիկան միանում է Ասիոյ հետ: Պէրեքոպի պարանոցը՝ որով Ղրիմը միանում է Եւրոպայի ցամաքի հետ և Կորնթոսի պարանոցը՝ որով Մօռան միանում է Բալքանեան թերակղզու հետ:

ՀԻՆԳ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՀՐՈՒԱՆԴԱՆՆԵՐԸ:

ա. Եւրոպայում՝ Նորդքին (Եւրոպիոյ ամենահիւսային ծայրը) Լինդեսնէս, Սկագէն, Ֆինիսթէրրէ, Լառօքա՝ (ամենաարևմտեան ծայրը Սուրբ Վինչէնթ, Թարիֆա՝ (ամենահարաւային ծայրը), Սպարտիվէնթօ և Մաթապան:

բ. Ասիայում՝ Բաբա (Ասիոյ ամենաարևմտեան ծայրը), Ռաս—իւլ—Հաթ, Քօմօրին, Բուռո՝ (—ամենահարաւային ծայրը), Ռօմանիա, Արևելեան՝ (—ամենաարևելեան ծայրը,) Թայմըռ և Հիւսիսա Արևելեան՝ (—ամենահիւսային ծայրը):

գ. Ափրիկայում՝ Բօն (Ափրիկայի ամենա—հիւսային ծայրը), Քալարի գլուխ՝ (—ամենաարևմտեան ծայրը), Գլուխ Բարեյուսոյ, Աղանց՝ (ամենահարաւային ծայրը) ամենաարևելեան ծայրը:

դ. Ամերիկայում՝ Պարրի (Հիւսիսային Ամերիկայի ամենատհիւսային ծայրը), իշխան Վալիսի՝ (—ամենաարևմտեան ծայրը), Ֆրովարդ, Հոռն՝ (—ամենահարաւայինը), Սէն Ռօք. (—ամենաարևելեանը):

և ե. Աւստրալիոյ նշանաւոր հրուանդաններն են. Եօրք՝ ամենահիւսիս և Ռիլսրն՝ ամենահարաւ:

ՀԻՆԳ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԿՂՋԻՆԵՐԸ:

ա. Եւրոպային պատկանող կղզիների մեծ մասը ջուրն է առաջացրել ուրեմն և յախային են, իսկ փաքր մասը միայն Հրանչութիւնն էն: Նշանաւորներն են Իսլանդիա, Նախցրերգէն, Քալագու, Վայգաչ, Սալօվեցի, Լաֆողէն, Ֆերրիսօրեան, Օքադեան, Շէթլանդեան, Հերրիտեան, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Հելկոլանդ, Զէլանդիա, Ֆինիա, Լանգելանդ, Լալանդ, Ֆալսթեր, Մէն, Բունհօլմ, Ռիւգէն, Էլանդ, Գօթլանդ, Ալանդեան խումբ, Էզէլ, Կօժլին, Մէն, Էնհիպի, Ռայթ, Նորմանդեան խումբ, Բալկարեան, Էլբա, Քօրսիքա, Սարգինիա, Սիկիլիա, Լիպարեան, Մալթա, Թօնիական, Նէկրօփօնտ, Կամ Էւրէա, Ցիկլադեան, Սպօրաթեան և Կրէմէ, Կամ Կանդիա:

1875 թումն, Գերմանական մի ուսումնական ընկերութեան շատ նեղութեաններ կրելուց յետոյ, մի սաւցապատ Երկիր է յայտնագործել, որ գտնվում է Հիւսիսային բեւեւի մօտերում 86° Հիւսիսային լայնութեան և 45° արևելեան Երկայնութեան տակ: Այն Երկիրը անուանել են Երկիր Պետերմանի, ի պատիւ այն ընկերութեան նախագահի: Նոր Երկիր ամենահեւսիսային հրուանդանը անուանել են Վիէննա:

բ. Ասիոյ պատկանող կղզիները յախայինն էն և Հրանչութիւնն, նոցանից գլխաւորներն են. Կիպրոս, Լաքեղիլիւեան, Մալդիվեան, Անդամանի և Նիքօբարեան բազմաթիւ կղզիներով լսումքերը՝ Սէլլօն, Զօնդեան խումբ, որոնց մէջ ամենամեծերն են՝ Սումաթրա, Ճաւա, Բառնէօ (մէծութեամբ աշխարհիս երկրորդ կղզին է, ունի 13,600 քառ. մղոն տարածութիւն)

և Սէլէրէս, Մօլուքեան, Ֆիլիպպեան խումբեր, որի մէծերն են՝ Մանկլիս, Լիւսօն և Մինդանաօ: Ֆօրմօղա, Հայնան, Հօնգ—Կօնգ, Ճափօնեան խումբ, որի ամենամեծերն են՝ Նիֆօն, Եստ, Սիկօքո և Քիուսու, Թարաքա կամ Սախալին, Քուրիլիս և Նոր Սիրիր:

գ. Ավրիկայի վերաբերող կղզիների մէծ մասը հրաբրդիսյին են: Նշանաւոր կղզիներն են՝ Քանարեան խումբ, որի մէջն է Երկաթի կղզին (Ֆէրրօ), որից քաշում են ընդհանրապէս գլխաւոր միջօրէականը, Ազօրեան, Մադէյրա, Դալարի գլխոյ արշիպելագ, Համբարձման, սուրբ Հեղինէի, Մադակասքար, Մասքարեան, Ամիրանթեան, Սէշելեան, Սօքօթօրա, և Փէրիմ:

դ. Ամերիկայի հիւսիսային կողմի կղզիները ցոճառային են, իսկ մասցեալների մէծ մասը հրաբրդային (Հարաւային Ամերիկայի հարաւա—արևմտեան կողմը գուանո): Կղզիներից զլիսաւորներն են՝ Բաֆֆինի երկիր, Քումբերլանդ, Քօկրուոն, Հիւսիսային Դէվօն, Քունվայլի երկիր, Մէլվիլ Բանքս, Իշխան Ալբերթ, թագուհի Վիկտօրիա, իշխան Վալէս, Գրէօնլանդիա (Կանաչ կղզի, աշխարհիս ամենամեծ կղզին է, ունի 14,700 քառ. մլոն տարածութիւն): Նիւֆառունդլընդ (Նոր Երկիր), Բերմութեան, Լուքայեան, կամ Բահամեան, Մէծ և փոքր Անթիլեաններ, որոնցից նշանաւոր են՝ Քուբա, Եամայիքա, Հայիթի, Փօրթօ—Ռիքօ, Մարթինիկա, և Տրինիդատ (Նորորդութիւն), Երկիր Հրոյ, Թալքլանդ, Չիլօէ, Վանդուէրէ, Սիթիս և Ալէութեան շարլ:

և ե. Աւստրալիոյ կամ Ովկիանիոյ կղզիների մէծ մասը հրաբրդային են, և էօրոլոյն ժայռերով շըջապատուած, կամ թէ միայն կօրալական են՝ թէ ծովի մակերևոյթից սակաւ ինչ ցած և թէ բարձր, ու ձեւացնում են հանէլառ կղզիներ (ատօներ): Երբեմն այնպիսի ատօների մէջ անուշ ջրով լծակներ էլ են գտնվում, ինչպէս՝ Պօմութու արշիպելագի մէջ եղածը: Կղզիներից նշանաւորներն են՝ Վանդիմէնի Երկիր

կամ Թասմանիա, Նոր Զէլանդիա, Նոր Գուինէա, կամ Պապուա, Սանդուիչեան, Մարիանեան, կամ Աւազակաց, Կարօլինեան, Նոր Կալէդօնիա, Թօնգա, կամ Բարեկամութեան, Կուքի, Թայիթի, կամ Ընկերութեան և Մարքիզեան արշիպելագներ և այլն:

Զգեցէ՛ք ընդհանուր հայեացք հինգ աշխարհների կղզիների գերեզ և յատկութեան վերաց, նոքա մայր ցամաքների վերաբերութեամբ ի՞նչպէս են ընկած:

Ո՞ր աշխարհի կղզիները լսու մեծի մասն ցամաքային են:

Ո՞ր աշխարհինը հրաբրդային:

Ո՞ր աշխարհինը կորալական:

Կղզիները ե՞նչ բնական յարմարութիւններ ունեն բնակութեան, երկրագործութեան, ձկնորսութեան և վաճառականութեան համար:

Համեմատեցէ՛ք երաքանչիւր աշխարհի կղզիները ընդհանրապէս և նորանցից ամենագլուխունները միմեանց հետ՝ մասնաւորապէս:

5. Պային մասերի բաժանմունքները:

Երկրիս մակերեսոյթի ցամաքը (թէ մայր ցամաքները և թէ կղզիները) ամեն կողմերից շըջապատուած է ջրով: Ամեն տեղ ջրի երեսը մակարդակ կամ հարթ է և ցամաքի մակերևոյթից միշտ ցած է: Երկրիս երեսի ջրերը մարդիկ գինդ մէծ հասերի են բաժանել, որոնց անուանել են ուղիւնանուերը: Առքա են:

ա. Հիւսիսային Սուսույետալ ու Հիւսիսան՝ որ գտնվում է Եւրոպայի, Ասիայի և Ամերիկայի հիւսիսային ափերի մէջ:

բ. Հարավային Սուսույետալ Ուղիւնան՝ Հարաւային բևեռային շըջանակի մէջ և պատում է Հարաւային սառած մայր ցամաքը:

գ. Արեւէտան, կամ Մէծ և կամ Խաղող Ուղիւնան՝ որ տարածվում է Երկու Ամերիկայի, Ասիայի և Աւստրալիայի ափերում:


դ. Արեւմբան, կամ Արականապէտան Ուղիւնան՝ որ տարածվում է, Եւրոպայի, Ափրիկայի և Երկու Ամերիկայի ափերում:

և ե. Հայոց Ուկտոսո՝ որ տարածվում է Ափրիկայի, Ասիայի և Աւստրալիոյ մէջ:

Մեծութեան կարգով ովկիանոսները այսպէս են. առաջին տեղը բռնում է Մեծ ովկիանոսը, նա երկրից ցամաքից $1\frac{1}{2}$ անգամ մեծ է: Երկրորդ տեղը բռնում է Աֆրանտեան ովկիանոսը՝ որ երկու անգամ փոքր է Մեծ ովկիանոսից: Երրորդը՝ Հնդկացը, որ Ատլանտեանից սակաւ ինչ փոքր է: Չորրորդը՝ Հիսուսին ովկիանոսը և հինգերորդը՝ Հարաւայնին ովկիանոսը, որ ամենափոքրն է:

Ի՞նչ ցամաքներով է շրջապատած իւրաքանչիւր ովկիանոսը:
Ի՞նչ ովկիանոսներով է շրջապատած իւրաքանչիւր ցամաքը:
Իւրաքանչիւր ովկիանոսի մէջ ի՞նչ կղզներ էք ճանաչում:
Մեծութեան կարգով անուանեցէք ովկիանոսները և աշխարհները:
Ո՞ւ ովկիանոսը շրջապատում է մի մայր ցամաք:
Ո՞ւ ովկիանոսը բռնուակ ձեւ ունի և նորա հարաւայն ափերը ո՞ւ
երեք աշխարհներն են բռնում:
Զեզ ճանօթ ո՞ւ թերակղզներն ու հրուանդաններն են տարածուած
այդ հինգ ովկիանոսների մէջ:

Ո՞ւ ովկիանոսի արմելեան և արեմաեան ափերը գրեթէ գուգընթաց են:



Հինգ աշխարհները և հինգ ովկիանոսները:

ԶՐԻ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Ինչպէս որ ցամաքի մասերը շատ կամ քիչ տարածուելով ջրերի մէջ անհաւասար ափեր են ձևացնում, նյոյնպէս և ջուրը ծեծելով ու մաշելով ցամաքի ափերը, մտել է նորա մէջ ու ձևացրել է իւր կղմից անհաւասար և օճածն ափեր: Ցամաքի մէջ մտած ջրերի մասերը կրում են զանազան անուններ, ինչպէս. Ծով, ծոց, կամ խորշ, նաև անունն գիտ և նէղուց կամ ջրանցուց:

Ծով ասվում է ովկիանոսի այն մասը, որ մեծ տարածութիւնով մտել է մայր ցամաքի մէջ և կամ շրջապատուել է կղզիներով:

Ծոց անուանվում է ովկիանոսի կամ ծովի այն մասը, որ շատ է մտած ցամաքի կամ մի մեծ կղզու մէջ: Նաև փոքր ծոցերը ասվում են նաև գոտ կամ խորշ: Խորշը կոչվում է նուահանգիստ՝ երբ բաւական յարմար և ապահով է լինում և հողմերից պաշտպանուած է լինում բնական կամ արհեստական միջոցով:

Կամ ջրանցուց կոչվում է ովկիանոսի կամ ծովի այն նեղ շերտը, որով միանում են երկու ովկիանոսներ կամ ծովեր, իսկ բաժանվում նն երկու ցամաքներ:

ՀԻՆԳ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆՇԱՆԱԽՈՐ ԾՈՎԵՐԸ ԵՒ ՆԵՂՈՒՑՆԵՐԸ:

ա. Եւրոպայում՝ Աղովի ծով, Ենիզելի կամ Կէրչէ նեղուց, Սև ծով, Կոստանդնուպոլսի կամ Վոսփորի նեղուց, Մարմարա ծով, Զանգալէսի կամ Դարդանէլի նեղուց, Եգէյեան ծով կամ Արշեպելագ, Միջերկրական ծով, Լեփանթիոյ կամ Կորնթոսի ծոց, Յօնիական ծով, Աղրիական ծով, Տարենթոնի ծոց, Մէսարայի նեղուց կտմ Փարոս, Թոսքանայի ծով, Սուրբ Բօնիֆաչիոյ նեղուց, Ճենովյաի և Լիոնի ծոցեր, Ճիպարալթար նեղուց, Բիսքայեան կամ Գասքոնի ծոց, Իռլանդիոյ ծով՝ Հիւսիսային և Առուրբ Գէորգ Ջրանցքներով, Լամանշի ջոր-

անցք, Փա - դը - Քալէի նեղուց, Հիւսիսային կամ Գերմանա -
կան ծով, Ակագերաք, Կաթէկաթ, Սունդ, Մեծ և Փոքր Բէլթ
նեղուցներ, Բալթիկ ծով՝ Ռիգայ, Ֆինի և Բօթնեան ծոցե -
րով, Սպիտակ ծով՝ Կանդալակի, Օնեգայի, Դվինայի և Մէզէ -
նի ծոցերով: Զէսի խորշ, Քարայի դրունք կամ նեղուց, Քա -
րայի ծով և Քարայի խորշ:

բ. Ասիոյ ափերում՝ Օրի խորշ, Բէհրինդայ նեղուց,
Բէհրինդայ ծով, Օխօթսի ծով, Թաթարի և Լափերուզ նեղուց -
ներ, Ճափօնի ծով, Սանդար և Քօրէա նեղուցներ, Արևելեան
Չինաց ծով, Դեղին ծով, Փէչիլ ծոց, Հարաւային Չինաց ծով,
Թօնքինի և Սիամի ծոցեր, Մալաքա և Զաւնդեան նեղուցներ,
Բէնգալայ ծոց, Պալաքեան նեղուց, Պարսից կամ Արաբիոյ ծով,
Ճիրմուզ նեղուց, Պարսից ծոց, Էօմէնի ծոց, Բարել - մանդէազ
նեղուց և Կարմիր ծով:

գ. Ափրիկայի ափերում՝ Կարմիր ծով, Բապէլ - մանդէազ
նեղուց, Մողամբիքի ջրանցք, Դվինէի ծոց, Ճիպրալթար նե -
ղուց, Քաբէս և Սիդրա ծոցեր:

դ. Երկու Ամերիկաների ափերում՝ Հիւսիսային ջրանց -
քների ծով, Բաֆֆինի ծոց, Դեկսի նեղուց, Հուդանի նե -
ղուց, Հուդանի ծոց, Բէլիլ նեղուց, Սուրբ Լաւրէնտիոսի ծոց,
Մէքսիկայի ծոց, Քարայիրեան կամ Անթիեան ծով, Մագելանի
նեղուց, Քալիֆօրնիոյ ծոց կամ Ծիրանի ծով. Բէհրինդայ ծով
և Բէհրինդայ նեղուց:

և ե. Աւստրալիան շատ աղքատ է ծովերով, ծոցերով,
և նեղուցներով, գլխաւորներն սորանք են՝ Կարպէնտարիօ և
Կէնգուրա ծոցեր, Թորեսի նեղուց, Բստային կամ Կօրալական
ծով, Բասսի նեղուց և Կուքի նեղուց՝ Նոր Զէլանդիոյ մէջ:

Ի՞նչ ծովեր և ծոցեր են ձեւացել եւբաքանչեւը աշխարհի ափերում:
(Այս բնչ) Անդուցով Ի՞նչ ծովեր կամ ովկիանսներ են միանում և
լ՞ու յամաքներ են բաժանում:
Իւրաքանչեւը ովկիանսներ են կողմեց և ո՞ր նեղուցով կամ ջըել լայն
առաջածով է միացած միւս ովկիանսներ և կամ իւր ծովեր հետ:

(Այս բնչ) Ծովը ո՞ր ովկիանսով մասն է: Այս ջըելը
(Այս բնչ) Ջերակղզին կամ կղզին լուս ջըերով է շըշապատուած:
(Այս բնչ) Հրուաններով ո՞ր ովկիանսով կամ ծովեր և կամ ծոցի մէջ է
տարածում:

Ո՞ր աշխարհի ծոցերը տեղի մէծ են:

Ո՞ր աշխարհի ափերում ծովեր կամ շատ ծոցեր չեն ձեւացել:

ՑԱՄԱԲԻ ԵՒ ԶՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

Ինչպէս տեսանք, ափերը ոչ միակերպ են և ոչ ուղեղ,
այլ ջուրը անդադար ցամաքի մէջ մտնելով՝ ձևացրել է և ձեւաց -
նում է անդադար օձաձեւ ափէր: Ափերը կարելի է երկու տե -
սակի բաժանել բարյը և յած:

Բարյը ափերի մօտ ծովը առհասարակ շատ խոր է լինում:
այնպէս, որ նաւերը առանց գժուարութիւնների կարողանում
են նորանց մօտենալ, իսկ ցած ափերի մօտ ծովը ծանծաղ է
լինում և երբեմն էլ այնքան երես, որ ոչ թէ նաւերը՝ այլ
մասկոյներն անգամ չեն կարողանում այն տեղերի—ափերին
մօտենալ: Բարձր ափերի մօտ ընդհանրապէս լինում են շատ
յարմար և բնական նաւահանգիստներ, իսկ ցած ափերի մօտ
յարմար նաւահանգիստներ շատ սակաւ են պատահում, շա -
տերը նորանցից արուեստական են լինում, որ մէծ ծախքով ու
շարչարանքով մարդուս հազիւ է յաջողվում շինել:

Հին աշխարհների խոր և նաւերին մատչելի ափերը հա -
մարվում են հետեւելները. Խւրոպից մէջ՝ Պիրենեան, Ալե -
նինեան և Բալկանեան թերակղզիների և Մեծ Բրիտանիոյ
կղզու ափերը: Ասիոյ մէջ՝ Հնդկաց թերակղզու ափերը:
Ամերիկայի մէջ՝ Նորա հարաւային ծայրը, երկու Ամերիկաների
ամբողջ արևետեան ափը և Հիւսիսային Ամերիկայի արևելեան
ափը: Աւստրալիայի՝ Հարտուի և Հարտաւա-արևելեան մասերի և
Վանդիմէնի երկրի ափերը:

Եւրոպան իւր ափերի յատկութիւններով և յարմարու -
թիւններով առաջին տեղն է բռնում:

Յած և բարձր ափերը զանազան յատկութիւններ ունեն, որոնց գլխաւորապէս առաջացնում է ջուրը և լինում է այսպէս. ջուրը բարձր ափերին խփելով՝ հետզհետէ նորան մաշում է և ողողում: Եթէ ափերը շատ կարծր են լինում, օրինակ՝ զրանիթեայ, ջուրը փոքր առ փոքր նորան ծլելով, մշտնում է ցամաքի մէջ ու ձւացնում է նեղ ու երկայն ծոցեր: Այս տեսակ ծոցեր շատ կան Աքանդինաւեան թերակղզու արևմտեան ափերում, որոնք տեղական բառով կոչվում են Փիօրդ: Այնտեղ այնպէս Փիօրդներ կան, որ տասնաւոր վերստերով ծուռ կամ կոր ուղղութիւնով մուած են ցամաքի մէջ՝ բարձր սեպացած ափերով: Ֆիօրդների յատակներում զիզուած են լինում հետզհետէ ժայռոտ ափերից թափթթվուած սուր սուր քարեր, որոնք ասվում են ծռվժայռեր: Իսկ Ականդինաւիացիք կոչում են չեր, որ մլրատ կը նշանակէ՝ վասն զի նոքանաւերին կտրում են ինչպէս մլրատներ:

Եթէ բարձր ափը փուխր է լինում, այն ժամանակ ջրի անդադար հարուածներով ափերից պոկուած մասերը փշովում են ու լցնում ծովի յատակը ու այդպիսով ծանծաղացնում են ափերը:

Բարձր ու կարծր ափ ունեցող տեղերից նշանաւորներն են. Եւրոպայում՝ Աքանդինաւիա թերակղզին, Մեծ Բրիտանիոյ հիւսիսա-արևմտեան կողմը և Իսլանդա կղզին: Ասիայում՝ նորա հիւսիսային ափի մեծ մասը, Ամերիկայում՝ Հիւսիսային Ամերիկայի արևմտեան և արեւելան ափերը, 50°-ից սկսեալ դէպի հիւսիս, Իսկ բարձր և փուխր կազմակերպութեամբ՝ նըշանաւոր է Սև ծովի հիւսիսա-արևմտեան կողմը եղածը:

Յած ափերի վերայ ծովը բոլորովին ուրիշ կերպով է ազդում. ինչպէս տեսանք, ծովը բարձր ափերը հետզհետէ փշում է, իսկ ցած ափերի վերայ ինքը իւր դէմ ամուր բարձրաւանդակներ է կանգնեցնում: Այնտեղ, նա գուրս է ձգում անդադար զանազան մեծութիւնով քարեր, մեծ ու մանր աւագ և այլ նիւթեր, որոնք միմեանց վերայ հետզհետէ դի-

զուելով՝ կազմում են պատնէշներ ու կոչվում են առաջաշեշ կամ լումբ: Կան աւազաթումբեր, որ ծովեզը բռնել են միքանի հարիւր վերատ երկայնութիւնով և մինչև 100 սաժէնից աւել բարձրութիւնով: Կան այնպիսի ցած ափեր էլ որ ծովը շատ անգամ բարձրանում ու ծածկում է եղերքը ու մեծ վնասներ է պատճառում մարդկանց. այնպիսի տեղերում մարդկան արևմտեան արհեստական պատնէշներ կամ թումբեր և կամ խիտ ծառեր են տնկում, որ աւազը դէմ առնի նորանց ու թումբ կազմուի, որպէս զի ծովի ջուրը ներս՝ ցամաքը, չը մտնէ: Ամենանշանաւոր բնական թումբերը են Եւրոպայում Բալթիկ և Գերմանական ծովերի հարաւային եղերքը, Բիստրայեան Ծոցի արևելեան ափերը և Հիւսիսային Ամերիկայի հարաւային ծովեզը: Իսկ ամենաերկար ու բարձր թումբերը գտնվում են Աֆրիկէյի հիւսիսա-արևմտեան ծովեզը՝ 27°-ից՝ 16° հիւսիսային լայնութիւնը, որ մօտ 1200 վերստ է:

Ի՞նչ է ափ կամ եզը:

Քանի տեսակ են ափերը:

Ո՞ր ափերը մատչելի են նաւերեն:

Բարձր և ցած ափերը վերայ ծովը ե՞նչ փոփոխութիւններ է անում:

Ի՞նչ է Փիօրդը:

Ի՞նչպէս են կազմվում բնական թումբերը:

Արհեստական թումբերը ե՞նչպէս են շնչում:

Կը փոխուէր արդեօք ափերը գծագրութեան ձեր, Եթէ նոքա ոքան

և եցէ երուէն ըրե մէջ, կամ թէ չըեց աւելի վեր բարձրանային:

ՑԱՄԱՐԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:

Ամեն տեղ ցամաքի մակերեւոյթը միակերպ չէ. նորա վերայ կան հողմ առջեր, ստուխայրեր, լուսներ կամ սորեր, հովտներ և չորեր:

Հարվ երբեքուր կամ հորթուունեներ կոչվում են ցամաքի այն մասերը, որոնց մակերեւոյթը որքան և իցէ հարթ կամ ուղիղ

է: Այնպէս հարթութիւններ կան, որ ամբողջ Եւրոպայից
մեծ են:

(Առհասարակ ցամաքի որ և իցէ կետի բարձրութիւնը
չափվում է ծովի կամ ովկիանոսի մակերեսյթից, որովհետեւ
նորա երեսը ամեն տեղ աւելի մակարդակ է, քան թէ ցամա-
քի երեսը:)

Երկրիս հարթութիւնների բարձրութիւնը միակերպ չէ.
Եթէ հարթ երկիրը ծովի մակերեսյթից 500 ոտնաշափից
բարձր չլինի՝ կը կոչուի յոժ երկիր, իսկ եթէ նորանից առա-
ւել բարձր լինի՝ կը կոչուի առբանարև կամ չափանշաշբ: Այնալիսի
լեռնադաշտեր կան, որ ծովի երեսից մինչև 3 վերստ բարձր են:

Լեռնադաշտերով նշանաւոր է Արևելեան մայր ցամաքը,
իսկ ցած երկիրներով՝ Արևելանեան և Հարաւային մայր ցա-
մաքները:

Ինչպէս որ կան ծովի մակերեսյթից շատ բարձր հար-
թութիւններ, նյոյնպէս և կան այնպիսի հարթ տեղեր, որոնք
ծովի մակերեսյթիցն էլ շատ ցած են:

Լեռնադաշտերից նշանաւորներն են. Եւրոպայում՝ Պիլի-
նեանը, Ասիոյ մէջ՝ Արևելեան Ասիականը, Իրանը, Հայաստանը,
Փոքր Ասիան, Արարիոյ մէջ է Նէջէթը և Հնդկաստանի մէջ՝
Դէկանը: Ափրիկայի մէջ՝ նորա հարաւային մասը: Հիւսիսային
Ամերիկայում՝ Մէքսիկա, Հարաւային Ամերիկայում՝ Տիտիկաքա,
իսկ Աւստրալիայում՝ սարահարթ չկայ:

Սարահարթներից ամենամեծն է Արևելեան ասիականը,
որ Եւրոպայից $1\frac{1}{2}$ անգամ մեծ է, իսկ ամենաբարձրն է Տի-
տիկաքան, որ ծովի մակերեսյթից 3 վերստ բարձր է:

Ցած հարթութիւններից նշանաւոր են.

ա. Եւրոպայի մէջ՝ Սարմատական կամ Ռուսականը, Գեր-
մանականը, Ֆրանսիականը, Ստորին Դանութեանը, Միջին Դանու-
թեան կամ Ունդարականը, Լոմբարդեանը, Արագոնետնը և Անդա-
լուզեանը:

բ. Ասիոյ մէջ՝ Սիրիր, Թուրքան և Պաղեստինը, (վերջին

երկուսը տեղ տեղ ծովի մակերեսյթից մինչև 10 սաժենաշափ
ցած են), Զինական, Հնդկական և Միջագետք:

գ. Ափրիկայի մէջ՝ Սահարա:

դ. Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ Միսսիսիպի և Հարա-
ւայինի մէջ՝ Օրինօքօ, Ամազոն և Լապլատա գետերի հար-
թութիւնները:

և ե. Աստրալիոյ մէջ՝ նորա ամբողջ միջին մասը:
Ցած հարթութիւնները զանազանվում են միմեանցից
իրենց մակերեսյթի յատկութիւններով, որոնք և կրում են
զանազան անուններ. տնտեսական, բնակչութեան, գործարքական
աշխատավայրեր:

Անտառական ասվում են այնպիսի հարթ երկիրները, որոնք
բաւական ընդարձակ, (կամ միքամի օրուայ ճանապարհ) տարա-
ծութեան վերայ չեն լինում ոչ ջուր, ոչ բոյս, ոչ կենդանիներ
և ոչ մարդ: Անսպատաներից մի քանիսը ծածկուած են լինում
կաւով, ոմանք խոշոր կամ մանր քարերով և խիճով և այլք՝
աւաղով: Անսպատաների մէջ, տեղ տեղ, պատահում են մեծ
կամ փոքր տարածութիւնով հողեր՝ ծածկուած դաշտը ու զու-
արթ խոտերով ու ծառերով՝ ուր լինում է ջուր և ապրում են
մարդիկ ու կենդանիներ: Այսպիսի տեղերը կոչվում են ռվասիներ:

Անսպատաները մի բաւական երկայն և համարեա անընդ-
հատ շարքով տարածուած են Հին աշխարհի միջին մասերում,
հարաւա-արևելանոտքից սկսած դէպի հիւսիս-արևելք, կամ թէ
Ափրիկայի արևելտեան ափերից մինչև միջին Ասիոյ արևելեան
ափը՝ գրեթէ ուղեղ գծով, որոնք կրում են հետեւեալ անուն-
ները: Ասիոյ մէջ՝ Գոբի կամ Շահ- Արևելեան Ասիական սարա-
հարթում, Իրանի, Թուրքանի, Հնդկաստանի, Արտէքիոյ և Ասորոյ անա-
պատները և Ափրիկայի մէջ՝ Ստանլի մէծ անսպատալը, որ բըռ-
նում է նորա ամբողջ հիւսիսային մասը: Այս անսպատի մէջ
կան շատ ովասիններ, ամենամեծն է Ֆէզզունի շարքը:

Հարաւային Ամերիկայի արևելտեան ափումն կայ Ալտամիա
նեղ և երկայն անսպատալը:

Պրոշա ասվում է այն ցած երկիրը, որ ծածկուած է լիւնում զբեթէ միայն խոտով ու արօտատեղերով (Մարգագետին):

Եւրոպայի մէջ նշանաւոր են. փոքր Ռուսիայի դաշտերն, որոնք տարածուած են Սև և Ազով ծովերի հիւսիսային ափերից վեր դէպի հիւսիս, բաւական լայն շերտով:

Ամերիկայի Անդամական գաղտնաբով նշանաւոր են նոյնպէս Ամերիկայի մէջ գտնուածները, որոնք զանազան անուններ են կրում, ինչ-պէս՝ Սէլլա կամ Փէնք Միսսիսիպի գետի հարթութիւնը), ծածկուած է մշտադալար խիտ խոտով։

Լիտոն՝ (Օրինօքօ գետի հարթութիւնը), որ անձրևային
եղանակում ծածկվում է բարձր ու լաւ խոտով, սա երաշտ
եղանակում չորանում է և փոշի դառնում ու երկիրը անապատի
ձև է ստանում: Տեղ տեղ միայն բազմատեսակ թանձրատերեւ
կակտումներն են մնում զալար: Անըլլա՝ (Ամազոն գետի հար-
թութիւնը)՝ ծածկուած է թանձր անմատչելի դարաւոր և
մշտադալար անտառով. (կարծվում է՝ որ այս անտառը Ամե-
րիկա ցամաքի հետ է գոյացել և մնում է մինչև այժմ): և
Փոքրիա (Լավիլատա գետի հարթութիւնը), որը երբեմն ծած-
կվում է խոտով, երբեմն էլ այն տեղը դառնում է ճահիճ
կամ ծով և կամ աւաղոր անապատ:

Օտածիլոյց անուանվում է հողի այն տարածութիւնը, որը լեռնադաշտերից սկսած աստիճանաբար իջնելով՝ հասնում հաւասարվում է ցած երկիրներին:

ի՞նչ կերպով է լինում ցամաքի մակերեսի թը:

Ե՞նչ է հարթութեա:

ԱՅ Հարթե Երկիր ԵՇԵՐ Կասուի ցած և ԵՇԵՐ ԵՄԵՃԵՐ:

Բարձր հարթութեանը ուղեց էնչպէս կ'ասուի.

Ո՞ւ աշխարհումն է ամենամեծ հարթութիւնը.

Անուանեցէ՛ք Նշանաւոր սաբահարթերը:

Կնչո՞ւ Ասեց սարակաբթերը զանազանվաւմ են Ամերիկայի սարա-
կաբթերից:

Անուշանեցէք ամենաբարձր սարահարթը և ամենամեծը, և ասացէք

մէկի բարձրութեան և երկրորդի մեծութեան չափերը՝
Յած հարթութիւնները միմեանցից ի՞նչով են զանազանվում և ի՞նչ
անուններ են կրում։
Ի՞նչ է գաշտը։
Որտեղ կայ մի նշանաւոր գաշտ։
Ի՞նչ է անապատը և ովասիսը։
Ցիցէ՛ք նշանաւոր անապատները և ովասիսը։
Ամերիկայի յած հարթութիւնները ի՞նչ անուններ են կրում և ի՞նչ
ի՞նչ յատկութիւններով են զանազանվում միմեանցից
ի՞նչ են զառիվայրը և բարձրութեան չափերը։

ԼԵՐՆԵՐ

Երկրիս ցած կամ բարձր հարթութիւնների վերայ կան
առանձին բարձրութիւններ, որոնք եթէ կէս վերատից աւելի
բարձր չեն՝ բայց են ասվում, իսկ նորանցից բարձրերը՝ «ուր
կամ յետառ»:

Բլօի կամ սարի ցածի մասը կոչվում է ստրուռ, միջն մաս
որ՝ յանց կամ իղուեր և կամ փեշեր, իսկ վերին մասը՝ գոգուել:

Եռները լինում են կամ առանձին առանձին, կամ շատ սարեր միասին խթառած և կամ շրբով միմեանց կպած, որոնք և կոչվում են չենագօռի կամ չենաշշլլայ:

სამეცნიერო გამოსახულებები და სამეცნიერო კონფერენციები

Եինում է որ մի քանի լեռնաշղթաներ հակառակ կողմերից դալով, կպչում են միմեանց և կազմում են չետահան գոյներ:

Բարձր սարերով ծածկած երկիրը ընդհանրապէս կօշվում
Աշուածան երկիր:

Հինգ աշխարհների նշանաւոր լեռնագօտիները

ա. Եւրոպայում՝ Ալպեան, որ Եւրոպայի ամենաբարձ
շղթան է, սորա միջին բարձրութիւնը 2 վերստ է: Այս շղթ
թայումն է Եւրոպից ամենաբարձր գագաթը՝ Սպիտակ լեռա

կամ Մօնրլան (որ ծովի մակերևոյթից 4 վերստ բարձր է), Ապենինեան, Կարպաթեան, Դինարեան, Պինդ, Բալքանեան, Սուդէթեան, Սաքսոնեան հանքայինք, Բոհեմեան, Սեաւ անտառ կամ Շվարցվալդ, Փիւրա, Արդէն, Վօժ, Օվէրն, Սէվէն, Պիրենեան, Աստուրեան, Սիերրա Մօրէնա, Գրանադեան, Սիերրա Նեվադա), Սքանդինավեան, Ուրալեան, Կովկասեան, Տաւրիկեան կամ Եսոյլա, Ֆինլանդեան, Վալդայեան բարձրաւանդակ՝ որի շարունակութիւնն է Ալաունեան ըլլաշարքը և վերջապէս՝ Նօթլանդեան, Չիվիօթ, Քումբերլանդ, Վալիսի և Քօրնվայլի Լեռները՝ Մեծ Բրիտանիոյ մէջ:

բ. Ասից մէջ՝ Հիմալայեան որ, երկրագնդիս ամենաբարձր շղթան է, նորա միջին բարձրութիւնը 5 վերստ է, սորա մէջ ամենաբարձր գագաթն է Էվերսթ (8 վերստ կամ 29,000 ոտ. բարձր ծովի երեսից): Կան նոյնպէս և ուրիշ բարձր գագաթներ. ինչպէս՝ Դաւալագիր, Կինչիտինքա և շատ ուրիշներ: Միւս նշանաւոր լեռնաշղթաներն են. Բօլոր—Դաղ, Քուէն—Լուն, Թիան—Նան, Հինդուկու, Սողոմոնեան գահ, Պարօպամիզ, Հնդկաչինական 5 զուգընթաց շղթաներ, Խին—Հան, Եարլո. Նովի, Ստանովոյ, Ալթայեան, Կամչաթքայ, Ներչինսքի, Արենելեան և Արեմուեան Հադէս, Վինդ, Տաւրոս, կամ Տօրոս, Անտիտաւրոս, Լիբանան, Անտիլիբանան, Քօրէր և Սինայ, Հայոց լեռնախմբեր, նոյնպէս և Եւրոպիոյ սահմանակից Ուրալեան և Կովկասեան շղթաները:

Յիշած լեռնաշղթաներում կան շատ բարձր գագաթներ, բայց թէ իւր դիրքովը և թէ մարդկութեան ու մեր ազգի պատմութեան մէջ խաղացած գերերովն նշանաւոր է Հայոց լեռնախմբում՝ Մէծի Մասի (17,220 ոտ. ծովի մակերևոյթից): Եւրոպացիք սորան սիսալմամբ Արարատ են անուանում, որ նորան շղթապատոլ դաշտի և նահանգի անունն է: Նորա մօտն է Փափր—Մասի (մօտ 12000 ոտ, ծովի մակ.) Մեծի արեւելակողմի, որից մի ձորով է բաժանուած: Արագած՝ Մասիսից Հիւսի (15,000 ոտ.), Արայի լեառն կամ Ծաղկէ—Վանիք՝ Արագա-

ծից արեւելք, որից մի խոր ձորով է բաժանուած:

գ. Ափրիկայի մէջ՝ Հարէշի կամ Եթովպիոյ լեռնախմբեր, Աթլաս, Լուսնի, Հարուծ, Լուփաթա՝ սորա մէջն են Ափրիկայի ամենաբարձր ձիւնապատ գագաթները (Քիլիմանջարո և Կէնիա), Սեղանի, Կամերօն, Աղամասուա, Ռունգա և Գվինիոյ սարեր:

դ. Ամերիկայի մէջ՝ Քորդիլերի շղթան՝ որ երկու Ամերիկաների ամբողջ արեւմտեան ծովեզըն է բռնում: Հարաւային Ամերիկայում նա կոչվում է նաև Անդեան շղթայ: Այստեղ Փերուի տէրութեան մէջ, Քորդիլերի շղթայի ամենաբարձր մասն է, նորա միջին բարձրութիւնը ծովի երեսից 3¹/₂ վերստ է: Այստեղ է ամբողջ Ամերիկայի ամենաբարձր Լիբէմ գագաթը (6¹/₂ վերստ): Միւս նշանաւոր լեռնագօտիներն են՝ Ապառաժներ, Աէդանեան շղթայ (անսպառելի քարածուխի, անտրացիտի հանքերով): և Սուրբ Մարթայի փոքրիկ շղթան. իսկ գագաթներից նշանաւորներն են՝ Քօմօփախի, Փիչինչա, Չիմբօլազօ, Նէվադա—Դի—Սորաթա, Նէվադա—Դիլիմանի և այլն:

և ե. Աւստրալիոյ մէջ՝ Աւստրալիական Ալպեր և Կապոյտ սարեր՝ մայր ցամաքի վերայ, իսկ Մաունա—Կէս, Մաունա—Լօա, կամ Ռոօ՝ ու Սանդուխեան կղղիների մէկի վերայ, և Հերակլէսի լեառը՝ նոր Գվինիոյ մէջ, որ վերջին տարիներս է գտնուած: (Հաւատացնում են, որ 32,876 ոտ. ծովի մակերեւոյթից բարձրութիւն ունի. կը նշանակէ, որ սա աշխարհիս ամենաբարձր գագաթն է:

Ի՞նչ է լեռը և ըլուռը

Ակրան մասերը ի՞նչպէս են կոչվում:

Ի՞նչ է լեռնաշղթայ և լեռնախումբ:

Իւրաքանչիւր աշխարհէն լեռնազոտիւերի միջին բարձրութիւնը ո՞քան է:

Նոցանից իւրաքանչիւր ի՞նչ ուղղութիւնով է տարածուած:

Եւրոպէիոյ և Ասիոյ սահմանների մէջ ի՞նչ շղթաներ կան:

Ասիոյ մէջ ո՞ր գոտիները լեռնաշապոյցներ և զուգընթաց շղթաներ են կազմում:

Իւրաքանչիւր լեռնագօտին ի՞նչ ուղղութիւնով է ձգուած:

ի՞նչու ցամաքի կամ սարերի բարձրութիւնը ծովի երեսիցն են չափում:

Իւրաքանչիւր աշխարհի բարձր գաղտաթները ո՞րոնք են:

Ստորերկրեայ զօրութիւնից պատառուած սարերն, այսինքն հրաբուխներն, մեծ մասամբ գտնվում են Մեծ ովկիանոսի երկու ափերի վերայ, Արևելեան և Արևմտեան մայր ցամաքների եղերքներում և Աւստրալիոյ կղղիների վերայ, այնպէս որ կազմվում է մի մեծ հրաբշային մասեան:

Երկրիս վերայ գտնուող հրաբուխներից նշանաւորներն են. Եւրոպայի մէջ՝ Վեգուվ՝ Ապենինեան թերակղու վերայ, Էտնա՝ Յ վերստ բարձր, Սիկիլիա կղղու վերայ, Ստրօմբոլի՝ Լիպարեան կղղիների մէկի վերայ, Հեքլա և Քրարլա՝ Խոլանդա կղղու վերայ:

Ասից մէջ՝ Դիմավէնդ՝ Իրանի սարահարթի հիւսիսային կողմը:

Ա. Փրիկայի մէջ՝ Տէնէրի Փա՝ Քանարեան կղղիների մէկի վերայ: Ամերիկայի մէջ՝ Քօրդիլերի շղթայի վերայ կան 60-ից աւել գործող հրաբուխներ, որի համար գիտնականներից մէկը (Ալէքսանդր Հումբոլդ) անուանել է Նորան հրաբղւային շարք: Նոցանից ամենաբարձրն է. Աքօնգակուա՝ Հարաւային Ամերիկայում, մօտ 6 վերստ բարձրութիւնով, սա աշխարհիս ամենաբարձրն է: և Ովկիանից մէջ՝ Մառնա—Լոա, Սանդուխեան կղղիների մէկի վերայ: Նորա բերանի շըշապատն է մօտ 10 վերստ: Մշտաբորբոք մեծ և փոքր հրաբուխներ շատ կան նաև Նոր Զէլանդիոյ և Ովկիանից ուրիշ շատ կղղիների վերայ:

ՀՈՎԻՏՏ, ԶՈՐ ԵՒ ԱՅԲ:

Երկու լեռնաշղթաների մէջ գտնուած լայն կամ նեղ հարթութիւնը կոչվում է հռվիտ:

Հովկիտները լինում են երկուայիկ և շատ մըշտու նրկայնածիդ այն հովկիտներն են, որոնք տարածվում են երկու զուգընթաց շղթաների մէջ, իսկ ընդմիջեալ ասվում են այն հովկիտները,

որոնք զանազան ուղղութիւնով տարածուած լեռնագօտիներովը ընդմիջում են: Երկու ընդմիջեալ հովկիտների միանալու տեղը շղթաները երկու կողմից այնքան են ցածանում, որ նոյն հովկիտների մէջ կազմվում է բնական դուռ, որը ասվում է Պրէ, պրէնկ և կամ դուռն: Նատ նեղ հովկիտը կոչվում է չր: Զորերը ընդհանրապէս լինում են շատ խոր և երկու կողմից սեպացեալ ժայռերով, ինչպէս՝ Քասախ գետի ձորը՝ Արարատեան նահանգում, Որոտն զիտի ձորը՝ Արցախում և ուրիշ շատերը: Կան և այնպիսի ձորեր, որոնք շատ կամ սակաւ բոլորակ են և կոչվում են ակտուատիային ձոր: Սորանք հանգած հրաբղւային բերաններ են: Նոցանից ոմանք շատ խոր են, ոմանց մէջ էլ լիքն է լինում ջրով:

Երկայնաձիդ հովկիտներից նշանաւորն է. Վալէսի հովկիտը՝ Սլպերի մէջ, իսկ ընդմիջեալ հովկիտներից՝ Ռէյս և Թէյս հովկիտը՝ նոյն շղթայի մէջ, որոնք և իրարու հետ միանուած են Սուրբ Գօթարտի կիրճով:

Սարերի մէջ գտնվում են մեծ կամ փոքր տարածութիւնով լեռնական դատարկ տեղեր, որոնք գոյացել են բնական զանազան պատճառներից: Այնպիսի տեղը կոչվում է ժողովնակամ այր: Այրերից մի քանիսը լինում են շատ խոր, ինչպէս էլլէն՝ Մեծ Բրիտանից մէջ (աշխարհիս ամենախոր այրը, որ 9,600 ոտ. խորութիւն ունի, իւր գոնից): Մեծութեան կողմից նշանաւոր է Առէլլենք այրը՝ Աւստրիոյ Թրիէստ քաղաքի մօտ (6 մլոն երկարութիւն ունի): Սորա մէջ կան ջրեր, որոնց մէջ ալլում են կոյր գորտեր և այլ ջրային սողուններ, նոյնպէս կոյր: Լինում են զանազան յատկութիւններով այրեր էլ, ինչպէս՝ Խտալիոյ Թուրին քաղաքի մօտ, Եւոլոս սարի մէջ, մի այր կայ, որ ամառուայ տաք ժամանակը նորա միջից սառն քամի է փչում:

Կան նոյնպէս և վնասակար գաղեր արտագրող այրեր. ինչպէս՝ Խտալիոյ Նախօլի քաղաքի մօտի Նոն այրը: Նորա այնպէս կոչուելու պատճառն այն է, որ եթէ նորա մէջ շուն

կամուրիշ փոքր կենդանի մանելու լինի, շուտով կը սատակի վասն զի գետնից առատ ածխածին գաղ գուրս գալով, մնում է այրի յատակի վերայ 21/2 ոտնաչափ թանձրութեամբ և որովհետեւ ածխածին գաղը մահացուցիչ է, նորա համար էլ նոյն օդ ծծող կենդանիները կը սատակին:

Այրեր էլ կան, որոնց սարի երեսից կրային բաղադրութեամբ ջուր է հոսում. այն ջուրը հողի մեջ ծծուելով զովում է ու այրի առաստաղցը շեթ առ շեթ գանդաղութեամբ թափուելիս, մի մասը քարանում է ու այն տեղից գեղեցիկ, գոյն զգոյն և բիւրեղանման շիթեր են կախվում նոքա ներոպական բառով կոչվում են սրալակիք: Առաստաղից թափած ջուրից այրի յատակի վերայ էլ կրային ջուրը նոյնպէս քարանալով՝ սրածայր, բայց աւելի հասու, կոնաձե կամ զանաղոն ձեւերով կրային քարեր են ձեւացնում, սրանք, նոյնպէս ներոպական բառով կոչվում են սրալակիք: Այս տեսակ այրեր շատ կան. մանաւանդ՝ Հայաստանում, Սկովտիայում, Խտալիայում, Յունաստանում և ուրիշ շատ տեղերում: Ամենագեղեցիկ տեսարան է ներկայացնում Սպօրատեան արշիպելագում Անտիփարոս կղզու այրը: Անուանի է նաև Սկովտիոյ մեջ Ֆանտա այրը, որ քամու ժամանակ ահարկու ձայներով արձագանք է արձակում, տեսքն էլ շատ գեղեցիկ է:

Հրաբուեների մեծ մասը աշխարհիւ ո՞ր կողմերում են դանվում:

Ուրտեղ է գտնվում ամենաբարձր հրաբուելու:

Անուանեցիք բոլոր աշխարհների նշանաւոր հրաբուեները:

Ի՞նչ է հովիտը:

Ո՞ր տեսակ հովիտները կոչվում են ընդմիջեալ և երկայնաձիք:

Ի՞նչ է կերձը:

Ալպեան սարերում է՞նչ նշանաւոր հովիտներ կան և է՞նչ կերձ:

Ի՞նչ է ձորը:

Ակաւառակային ձորը է՞նչ մնացորդ է:

Հայաստանում է՞նչ նշանաւոր ձորեր կան:

Այրը է՞նչ է: Ի՞նչ տեսակ այրեր կան:

Ի՞նչ յատկութիւններով այշոք կան: Ի՞նչ բաներ են ստալագմիտ և ստալակտիտ այս պահաժամուրական անունները: ՅԱՄԱԲԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ,

Դաշտային կամ խոսապատ հարթութիւնները դիւրացնում են թափառական ժողովրդոց ապրուստը: Նոքա իրենց հօտերի գլխաւոր պիտոյքը, արօտը, միշտ միևնուն տեղը չը գտնելով, ակամայից սոփառուած, տեղերը միշտ փոփոխում են, որ արածացնեն իրենց միակ հարստութիւն կազմող ընտանի կենդանիները: Աւագոտ հարթութիւնները կամ անապատները, համարեա թէ մարդկանց ապրուստը աւելի են զըժուարացնում: Նոքա աւելի են արգելում մարդկանց միմեանց հետ հաղորդակցութիւնները, քան թէ ամենաբարձր լեռնագօտիները: Նթէ անապատներում չլինէին ովասիսները, որոնք նոյն նշանակութիւնը ունեն, ինչ որ և բարձր սարերի մեջ կիրճերը, և եթէ չլինէր ուղողը գուցէ անապատներից միքանիսը մինչև այժմ էլ կամ մինչ ցյափիտեան անյայտ ու անանցանելի լինէին:

Ծովեգերները ըստ մեծի մասին աւազային լինելով՝ երկրագործութեան, կամ խաշնաբածութեան անյարմար են. նոյա վերայ ապրով ժողովուրդը պարապում է գլխաւորապէս ձկնորսութիւնով, նաւազնացութիւնով և վաճառականութիւնով: Լեռնագաշտերի և հովիտների բնակիչները պարապում են խաշնաբածութիւնով և մանաւանդ՝ երկրագործութիւնով:

Լեռնագօտիներն էլ ունեն իրենց ազգեցութիւնները՝ թէ եղանակի տարբերութեան, թէ բուսականութեան և թէ կենդանիների ու մարդկային ազգի վերայ. ինչպէս՝ այն շղթաները, որոնք տարածուած են արեւելքից արեւմնատք՝ մի երկրի ասքութեան կամ ցրտութեան զլիսաւոր պատճառներն են. այս բոլորովին բնական երեւոյթ է, որ այնպիսի գիրքով ընկած լեռնագօտիների հիւսիսային փեշերը աւելի ցուրտ են լինում, քան թէ հարաւային երեսը՝ հիւսիսային կիսագնդում: Անդհաւ-

կառակն է լինում հարաւային կիսագնդումն։ (ի՞նչու)։ Այն
լեռնագոտիները, որոնք տարածուած են ծովերի ափերի մօտ,
շատ տեղ այն երկրի ներքին մասերը զրկում են ծովային խո-
նաւութիւնից, և երբեմն էլ այնքան տարբութեան պատճառ են
լինում, մինչեւ որ երկիրը անապատ են դարձնում։ ինչպէս՝
Ատակամա անապատը՝ Ամերիկայում։

Արերը արգելում են ընդհանրապէս ազգերի միութիւնը,
իսկ հարթ երկիրները—նպաստում են. ինչպէս Ռուսական
հարթութեան վերայ ապրում են բազմաթիւ ժողովուրդներ,
սակայն գրեթէ բոլորը մի ազգ են կազմում։ Ալպերից հիւսիս՝
ապրում են Գերմանացիք, հարաւ՝ Դուալացիք և արևմտաք՝
Ֆրանսիացիք. նոյնպէս Պիլինեան սարերից հիւսիս՝ Ֆրան-
սիացիք, իսկ հարաւ՝ Սպանիացիք։ Եւ այսպէս, ոչ միայն ազ-
գեր են ջոկվում, այլ և լեզուներն էլ բոլորովին տարբեր են
ոչ միայն լեռնաշղթաների զանազան կողմերը, այլ և միեւ նոյն
շղթայի մէջ ամեն մի հովիտի կամ ձորի ժողովուրդը խօսում է
իւր առանձին բարբառով և ունի իւր առանձին կրօնը. ինչ-
պէս՝ Զուիցերիայում, Կովկասում, Հայաստանում և այլն։

Լեռնոտ երկիրների մէջ կիրճերը ներկայացնում են եր-
բեմն յարմար և բնական ձանապարհներ՝ պատերազմների և ազ-
գաց արշաւանքների ժամանակ, ինչպէս՝ Թէրմօփիլէի կիրճը՝ Յու-
նաստանում, Ճորա գուռն՝ Կովկասումն (Դերբէնդ) և ուրիշները։
Եւ վերջապէս լեռները, իբրև բնական բերդեր, պաշտպանում
են իրենց բնակիչներին օտարի յարձակումներից կամ թէ
իրենք լեռնեցիք ասպատակելով զբացի երկիրները՝ պատինում
են և պաշտպանվում իրենց անմասնելի սարերի մէջ. ինչպէս՝
Զուիցերիացիք՝ Ալպերում, Դարադաղիք՝ Դինարեան սարերում,
Էլգուքը՝ Կովկասում, Զէյթունցիք՝ Տօրոսի մէջ և այլն։

Լեռնաբնակները պարապում են որսորդութեամբ, խաշ-
նաբածութեամբ և հանքաբանութեամբ՝ նոքա առհասարակ ազ-
տասեր, հայրենասեր, բայց և մասամբ էլ աւազակաբարոյ ժո-
ղովուրդներ են։

Գաշտային կամ խոտապատ հարթութիւնների ժողովութել գըլխաւորա-
պէս էնչով է պարտապում։

Անապատները է՞նչ բանի արգելք են լինում։

Ի՞նչ բանների շնորհեւ անապատները մեզ յայտնի եղան։

Լեռնագոտները երեսց դրութեամբը է՞նչ ինչ աղեցութիւններ
կարող են ունենալ մի երկը կլիմայի, մարդկային ազգերի, լեզուների և
կրօնքի վերայ։

Ցոյց տուէ՛ք քանի մի լեռնագոտներ, որոնց հիւսիսային կողմը ցուլտ
է և հարաւակողմը տաք, կամ որոնց հարաւային կողմը ցուլտ է և հիւսիսը
տաք։ Նոյնպէս քանի մի լեռնագոտներ, որոնց զանազան կողմերում աղբում
են զանազան աղբեր, որոնք աղբով լեզուով և կրօներով միմեացեց տարբեր
են. կրօները է՞նչ բանի են օդնում։ Պատերազմների ժամանակ է՞նչ նըշա-
նակութիւն են ունենում լեռնագոտները։

Լեռնաբնակ ժողովրեան զլիաւոր պարապմունքն է՞նչ է։

ԾՈՎԻ ՑԱՏԱԿԻ ԿԱԶՄՈՒԹԻՒԻՆԸ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ԶՐԻ ՑԱՏԿՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ։

Ծովի (ովկիանոսի) յատակի մակերեսյթը այնպէս զանո-
ղանակերպ է, ինչպէս որ է ցամաքի մակերեսյթը։ Ծովի յա-
տակի մակերեսյթը ծածկուած է ջրով, և կամ թէ լինելով
ցամաքի մակերեսյթի շարունակութիւն, նա ևս միակերպ ու
բոլորովին հարթ չէ. նորա վերայ կան հարթութիւններ,
ցած երկիրներ, սարահարթեր, լեռներ և այլն։

Ծովի յատակի յած երկիրները նորա ամենախոր տեղերն
են (Ալլանտեան ովկիանոսի հարաւային մասերում 16 վերստ
խորութիւննում չը կարողացան յատակը գտնել)։

Ծովի սորոշութերը եթէ փոքր ինչ ջրի մակերեսյթից ցած
են՝ ասվում են ծանծառ տեղեր, ինչպէս՝ Աւսորալիոյ հիւսի-
սոյին կողմը Կարպանտարիո ծոցը, Նիւօֆառունովընդ կղզու մօտ
Ընդարձակ ծանծառուր, կան և շատ ուրիշներ։ Իսկ եթէ
սարահարթը ջրի մակերեսյթից գուրս է, այն է որ ձեւացնում
է Ընդարձակ հարթ կղզիներ։

Ծովի յատակի վերայ բարձրացած են նոյնպէս շետեր
և չունագօտիներ, որոնց զադաթները կամ փեշերը եթէ ջրից
փոքր ինչ ցած են լինում, ասվում են ծովագուշակ, իսկ եթէ
ջրիցը դուրս են ցցուած, այն է, ձեացնում են կղզեաց խում-
բեր, շարքեր և արշեպելագներ, (ինչպէս՝ Կուրիլիան, Մարիա-
նեան, Ալչութեան և շատ ուրիշներ):

Ծովի ջուրը դառն, աղի ու շատ անախորժ համ ունի:
Նա խմելու համար անպէտք է: Ծովագնացները իրենց հետ
ցամաքից միշտ անուշ ջուր են մեր առևում: Ծովի ջրի աղի-
ութիւնը ամեն տեղ միակերպ չէ. տաք և ցուրտ գօտիներում
ջուրը աւելի աղի է, քան թէ բարեխառն գօտիներում, որով
հետեւ տաք գօտու ծովերի մէջ եղած քաղցր ջուրը արելից
սաստիկ տաքանալուց, ըստ մեծի մասին գոլորշխանում է, իսկ
մնացած ջուրը շատ աղի և անպէտք է լինում: Բայց ցուրտ
գօտու ծովերի մէջ, ինչպէս յայտնի է, քաղցր ջուրն է միայն
սառում, իսկ չը սառածը անտանելի աղի է լինում:

Ափերի մօտ ջուրը աւելի անուշ է, վասն զի՞ նորա մէջ ցամաքից թափվում են շատ գետեր, առոււակներ և անձրեխ ջրեր, իսկ ներսի կողմերը աւելի աղի է:

Ովկիանոսի ջրերը գիշեր ժամանակ փայլում են այնպէս, ինչպէս որ մժանը մատներով լուցկինի ծայրը տրորենք. դորա պատճառն այն է, որ ովկիանոսի մէջ ապրում են շատ մանր և մինչև անդամ պարզ աչքով անտեսանելի լրւսածին (փոսիրային) կենդանիներ։ Նորա գիշերը, արէկոծութեան ժամանակ, փայ-

Հեցնում են ալիքների գագաթները և ձևացնում հրային շերտեր։ Այս փոսի փորային լոյսը նշարվում է նաև պարզ և հանդարտ գիշերները, մակոյիկ կամ նաւի գնալիս, որնց հետքը փայլում է ինչպէս մեղմ հրային ժապաւէն։ Զկների շարժուելուցն էլ երեսում են նոյն փայլուն շերտերը։ Այս երեսոյթը ընդհանրապէս տաք գոտումն յաճախ և պարզ է ի ինում։

Ավերի մօտ ջուրը պղար է, վասն զե՞նախ՝ ցա-
մաքից թափվում են նորա մէջ շատ տղմալից և պղտոր ջրե-
րով գետեր, և երկրորդ՝ որ ծովը ալէկոծուելիս խփվում է ա-
փերին ու պղտորվում է, իսկ միջի կողմելոր պարզ են:

Ծովին ջուրը տեղ տեղ շատ պարզ է, մանաւանդ՝ չիւսիւ-
սային Սառուցեալ և Ատլանտեան ովկիանուների մի քանի տե-
ղերում: Ատլանտեան ովկիանոսի մէջ այնքան պարզ տեղ կայ,
որ մինչեւ 25 սամէն խորութիւնում տեսնվում են յատակի
անհարթութիւնները՝ տեսակ տեսակ բոյսերով ծածկուած և
նոցա մէջ վիստացող զանազան գեղեցիկ ձկներ և ուրիշ կեն-
զանիներ:

Ծովի յատակի զանազանութիւններն ունեն իրենց համար նշանակութիւններ. այսպէս՝ ծանծաղ հարթութիւններ կան, որոնք քանի մի տեսակ ձկների ամենայարմար բնականներն կամ կայարաններն են. (Նիւֆառնդլընգինը): Այնպիսի տեղեր ամեն տարի գնում են բազմաթիւ ձկնորսներ ու միշտ վերադառնում են տռատ որսով: Ծովաժայուերը և քարերը պաշտպանում են մի երկիր թշնամեաց նաւերի յարձակմունքներից, որովհետև նոքա արգելում են նոցա աներկիրւղ մօտենալ ափերին և կամ նորանցից չեռանալ:

ի՞ւս տեսը ունի ծովի լատակը:

Ի՞նչեր կան նորա վեց

Նորա ցած Երկիրները Ե՞ն նէ ձեւադնեռն

Ո՞ւն է ամենախոը ովկիանոսը:

ի՞նչ են կազմում ծովի սարահարթերը և յեղագօտիները

Մանծաղ յատակից ամենահշանաւորն ո՞րն է:

Ծովի ջուրը է՞նչ համ ունի:
Ո՞ւ գօտու տակ նա աւելի աղի է և պատճառն է՞նչ է:
Ծովը է՞նչ զոյներով է լինում:
Նորա գոյների պատճառն է՞նչ է:
Ովկիանոսի երեսին՝ փոսփորային լոյս երեալու պատճառն է՞նչ է:
Այս երեսյթը ո՞ւ գօտու ծովլերումը շատ կը պատահի:
Ովկիանոսի ջուրը ո՞ւտեղ պարզ է և ո՞ւտեղ պղորը
Առլանտեան ովկիանոսի մէջ մինչև քանի՛ սաժէն խորութիւնում երեւ-
ում է յատակը:
Ծովի յատակի կադմութիւնները է՞նչ օգուտաներ և քնաներ են
առաջացնում:


ՕՒ:

Այն գաղային մարմինը, որով շրջապատուած է մեր եր-
կիրը, կոչվում է օր:

Ողը կարելի է համարել երկրագնդիս իսկական մակերեսոյ-
թը, որովէտեև նա հաւասարապէս ամեն կողմից շրջապատում է
թէ հողը և թէ ցամաքը: Թէ օդը ո՞ւքան թանձրութեամբ է
պատում մեր երկրին, ճիշտ յայտնի չէ. ոմանք օդապարիկնե-
րով բարձրացնել են օդի մէջ մինչև 10 վերստ, նորանից բարձր
օդը այնքան նոսր է, որ շունչ քաշելը անկարելի է լինում:
Նոսր օդում ոչ մարդ կարող է ապրել և ոչ կենդանի: Դեռ ևս
ոչ ոք չէ կարողացնել այնքան բարձրանալ, ուր բոլորովին օդ
չկայ: Գիտնականները ասում են, որ օդի բարձրութիւնը 60—
70 վերստ է: Օդի թանձրութեան հետեանքներն են՝ երկնքի
գոյները և բոլոր օդերեանները, որոնք են՝ իրենքներոյնը, արևի և
լուսնի բաները, ծիսծանը, արշալյանը, վերջալյանը և արեաննաւելինը:

Օդերեայի կամ կրկներեցիթ կասուի օդի միջի այն երեսյ-
թը, որ ամառուայ տաք եղանակին դաշտերի վերայ գտնուած
չէնքերը և կամ ծովի վերայ նաւը, միմեանց վերայ նստած,
երկու հատ են երեսում. մէկը ուղիղ, միւսը գլխիվայր. նոյնպէս

և մեր հորիզոնից ցած գտնուած առարկաները, բարձր, օդի
մէջ են երեսում: Օդի թանձրութիւնից հեռաւոր առարկաների
պատկերները անդրադառնում են օդի մէջ, ինչպէս հայելու մէջ,
երբեմն բնականից էլ աւելի մեծ են երեսում և շատ եկած
դիրքով:



Կառավար կրկներեցիթը:

Կրկներեցիթը պատահում է ընդհանրապէս հարթ և
մանաւանդ՝ աւազոտ երկիրների վերայ, (տաք գօտումը աւելի
յաձախ): Որուսիոյ մէջ ոյս երեսյթը կոչվում է Մարէվ:

Ամառ ժամանակը յաձախ պատահում է, որ արևի չորս
կողմը կը ըջանակ է կազմվում, ծիածանի պէս գյոն զգոյն.
այս երեսյթը կոչվում է բան արեւի: Սորա երեսյթի պատճառը
գիտնականները եղածացնում են. որ օդի բարձր մասերում
շատ նուրբ գոլորշները սառչելով՝ արևի ծառագայթները նոցա
վերայ խփելիս անդրադառնում են ու նորա չորս կողմը մեծ
կամ փոքր շրջանակներ են կազմում: Լուսինն էլ երբեմն բակ է
ունենում. բայց նորանը արևի բակի նման պարզ գոյներով չէ
լինում, այլ աւելի աղօտ լուսով ու միայն մի կողմն փոքր ինչ
կարմրագոյն: Պատահում է երբեմն, որ արևի կամ լուսնի բա-
կերն մի քանի համակենդրոն շրջանակներով են լինում, այն
միջոցին դրսի շրջանակի գոյները շատ փայլուն չեն լինում:

Կամացիսէ մարմին է օդու նա երկը ո՞ր մասն է պատճեն զա Ա
Ո՞քան է կարծվում նորա բարձրութիւնը
Սարդիկ օդապարփեկով ո՞ւրան են կարողացել բարձրանալ: Օդի թան-
ձրութիւնը է՞նչ երևոյթներ են յառաջանում:

Կըկներեպիթ պատճառն է՞նչ է:


Ո՞ւ երկերներում յաձախ է պատահում կըկներեպիթ ըւ:
Արևի և լուսնի բակերն է՞նչ են, և է՞նչ են նոյս գոյանալու
պատճառներն:

ԵՐԿՐԻՍ ՎԵՐԱՅ ԱՐԵՒԻՑ ԵՒ ԼՈՒՍՆԻՑ ԱԽԱԶԱՅԱԾ ԵԲԵՒՌՅՆԵՐԸ:

Ովկիանոսի և կամբաց ծովերի ջուրը օրը (գիշեր ու
ցերեկ) 4 անգամ իւր բնական մակերեսիթից կանոնաւոր կեր-
պով բարձրանում է ու ցածանում; Բարձրանալուն ասում են
Տակընթացութիւն, իսկ ցածանալուն՝ աէպառութիւն:

Երկնային մարմինները որքան իրարու աւելի մօտ լինեն,
ձգտողութիւնն էլ այնքան սաստիկ կը լինի. որովհետեւ լուսինը
ամեն աստղերից աւելի մօտ է երկրիս, նորա համար էլ ծովի
մակընթացութեան ու տեղատութեան դիմաւոր պատճառն էլ
լուսինն է: Նա իւր ձգտողական ոյժը ձգելով երկրիս վերայ,
քաշում է դէպիրեն նորա փափուկ և կամ հեղուկ մասը՝
ջուրը, որին և նա երկրիս որ կողմն որ լինում է, ջրերն
էլ դէպի այն կողմն են բարձրանում՝ որով այնտեղի ջրերն
աւելի շատանում են, քան թէ լուսին չելած կողմը: Երեսում
է որ արևն էլ մէծ ազգեցութիւն ունի ծովի ջրերի վերայ.
վասն զի երբ արելը և լուսինը երկրիս մի կողմը ուղեղ զծի
վերայ են ընկնում, մակընթացութիւնը աւելի սաստիկ է լինում:
Նորանց իրարուց հեռու եղած մի ջոցին մակընթացու-
թիւնը տկար է լինում: Բևեռների կողմը ու ներքին ծովերի
վերայ, մակընթացութիւնը շատ փոքր է լինում, իսկ տաք գո-
տում և բաց ծովերումը՝ շատ մէծ է լինում:

Մակընթացութիւնը ու տեղատութիւնը ինչպէս ասա-



Մակընթացութիւն և Տակընթացութիւն

(Աջակողմին՝ յած մակընթացութիւն է, ուր լինում է լուսնի սուսանին և մերժին բառով մասնիկները՝ աղամանին կողմէն է, ուր լուսինը մակընթացութիւն է, ուր պատահական լուսնի և լուսին լուսնի մակընթացութիւն է, ուր պատահական լուսնի է լուսին լուսնի մակընթացութիւն է)

ցինք 6 ժամը մի անգամ է լինում: 24 ժամուայ մէջ ջուրը
երկու անգամ բարձրանում է և երկու անգամ ցածանում կամ
յետ քաշվում: Մակրնթացութիւնը երկրագնդիս երկու հա-
կառակ կողմերի վերայ պատահում է միենոյն ժամանակ, իսկ
նոցա միջի ծովը իւր բնական մակերեսոյթից առաւել ցածա-
նում է, այսինքն այն ժամանակ լինում է տեղատութիւն:

Մակրնթացութիւնը ծանծաղ գետերի և ծոցերի նա-
ւարկութեանը շատ է օգնում: Նորա մակրնթացութեան ժա-
մանակ լցվում են ջրով: Ծովագնացները իմանալով մակրնթա-
ցութեան ժամանակները, աշխատում են միշտ նորանից օգուտ
քաղել՝ մանել նաւահանգիստը և ափի մօտ խարիսխ ձգել:
Իսկ տեղատութեան ժամանակ՝ նաւերը գետերից ու ծովերից
հեշտութիւնով են դուրս գտլիս: Տեղատութիւնը ու մակրնթա-
ցութիւնը բացի նաւարկութեան օգնելուց, ծովեղերեայ բնակիչ-
ներին տալիս են առատ աղ ու ջուրը յետ քաշուելով՝ մար-
դիկ կարողանում են ժողովել նորա յատակից բաղմատեսակ
խեցեղէններ և ծովային ժժմունք:

(Մակրնթացութեան բարձրութիւնը ամեն աեղ միակերպ չէ. ովկիա-
նուի մէջ աելի ցած է, քան թէ ափերի մօտ: Արխանցէլսկում նա բարձրա-
նում է մինչեւ 5 ոսնաշաբ, իսկ Հետո. Ամբիկայում Ֆունդի ծոցում՝ հաս-
նում է մինչեւ 70 ոսնաշաբի: Առհասարակ նեղ տեղերում՝ մակրնթացու-
թեան ալեքները շատ յորդ են լինում: պատահում է որ այն կոհակները
մտնում են գետաբերանների մէջ ու նաւերին վասառմ են:)

Մակրնթացութիւնը և տեղատութիւնը լինչեց են առաջանում:
Լուսնի ձգտողական դօրութիւնը լինչ բանի վերայ շատ զգալի է
լինում:

Մակրնթացութիւնը եղը աւելի սաստիկ է լինում:
Ո՞ր գօտում և ծովերում նա թոյլ է լինում ու ո՞ր գօտում և ծովե-
րում մէծ:

Երկրտ ո՞ր կողմերի ջուրը միենոյն ժամանակ է բարձրանում իւր
մակերեւոյթից:

Ի՞նչպէս է կոչվում այն երեսոյթը, երբ ջուրը իւր բնական մակե-

ըկոյթից յետ է քաշլում:

Մակրնթացութիւնը և աեղատութիւնը քանի ժամը մի անգամ են
սրատահում:

Նորա ի՞նչ օգուտաներ են տալիս:

ԾՈՎԻ ՀՈՍԱՆՔՆԵՐ:

Ովկիանոսի ջուրը աեղ տեղ միշտ վաղում է ինչպէս
գետ. — այս երեսոյթը կոչվում է ծռչի հոսանք-
ների պատճառն արեն է, որ հասարակածի տակ ջուրը աւելի
է տաքացնում: Քան թէ բեկուների մօտ Այսպէս՝ ովկիանոս-
ների ջրերի հոսանքները նմանում են կաթսայի մէջ տաքա-
ցրած ջրի շարժմոնքն: Կաթսայի մէջ եռացող ջուրը միշտ
դէպի մի կողմն է ուղղվում: այն է՝ ուժեղ կրակի հակառակ
կողմը. այնաեղ նա ցածանում է և հասնում է ամանի յատա-
կին, այնտեղից անցնում է կաթսայի առաւել տաք կողմը,
որտեղից կրկին վեր է բարձրանում և այսպէս շարունակաբար:

Իսկ և իսկ այնպէս է և ովկիանոսի ջրերի շարժմոնքի կամ
հոսանքի պատճառը. հասարակածի առակ ջուրը արեկից աւելի
տաքանալով և համարեա վեր ենելով ուղղվում է դէպի բեկու-
ները, իսկ բեկուային ծովերից ցուրտ ջուրը նորա տակից
հոսում է դէպի հասարակածը, այստեղ նա կրկին բարձրանում
է երես և այսպէս շարունակաբար՝ տաք և ցուրտ ջրերը մի-
մեանց տեղն են բանում: Թէև մայր ցամաքները զգակի կերպով
փոխում են հոսաքների ընթացքի ուղղութիւնը, սակայն կա-
րելի է նրանց երեք կարգ բաժանել. Հասորով ածածուային, Տաք և
Յուրաք:

ա. Հասարակածային կոչվում է այն հոսանքը, որ տաք գօ-
տու մէջ, հասարակածի տակը և նորա երկու կողմերն է հո-
սում: Այնտեղ ջուրը հոսում է ինչպէս գետ, 500 վելստից
աւելի լայնութիւնով՝ արեւելքից դէպի արեմուտք:

Հոսանքի ուղղութեամբ նորա դէմընկած մայր ցամաք-
ները բաժանում են նորան երեք մաս: ա. Հասորով ածածուային հո-

սանք Մեծ ովկիանու, բ. — Հ արշակուն և գ. — Առլուստիան: Հիւ-
բ. Տար հոսանքները Հասարակածային հոսանքների մահա-
զերն են: Նորանցից նշանաւորներն են. ձափռի, Մռլամբէտի,
Բրաշիլիոյ և Մոյոյին կամ Գոլդութրօն:

և գ. Ցորպ հոսանքները բեեռային երկրներից դէպի
Հասարակած ընթացողներն են. նոքա կարծես թէ տաք հո-
սանքների առած ջրերի տեղն են բանում: Ցուրտ հոսանք-
ներից նշանաւորներն են՝ Օխոտի, Բաքչէնի, Առաբուլիոյ, Փալտ-
քանիոյ և Փէրուի հոսանքները:

Երկու հոսանքներ միմեանց հանդիպելով պըթափում են
ու կազմում են ջրապտոյտներ: Նորա մէջ ջուրը փրփրալով
պտըթափում ու ձագարաձե ընկղմում է միշտ դէպի անդունդը:
Ջրապտոյտները շատ վանդաւոր են ծովագնացների համար.
ինչ նաւ նորա մէջ ընկնի, նոյն րոպէին կը կղմում է կը թա-
զուի ծովի անդունդի մէջ, որաեղեց փոքր ժամանակից յետոյ
նորա կտորները միայն կը նկատուին: Ջրապտոյտներից ամենա-
մեծը ու սարսափելին Աքանդինավեան թերակղզու հիւսիսա-
արևմտեան ափերի մօտ, Լաֆօնախինեան կղմների հարաւային
մասնում եղածն է, նա կոչվում է Մալաթրօն, որ նշանակում է
աղոյալ կամ Քշրոշ հոսանք: Նորա ահոելի գոչենը ծովի վե-
րայ շատ հեռաւոր տեղից է լսվում: Նաւերը աշխատում են
միշտ նորանից միքանի մղոններով հեռու կինալ:

Ծովի հոսանքները ցրտացնում են կամ տաքացնում այն
երկիրները՝ դէպի օրոնց կողմը որ հոսում են: Օրինակ՝ Ծո-
յային հոսանքը կամ Գոլֆսթրօմը տաք գօտինեցից գալով դէ-
պի Եւրոպա, նորան տաքացնում է, նորան կարելի է Եւրոպայի
վառարան անուանել: Այս հոսանքի հետեանքն Ռուսաստանի
մէջ անգամ զգալի է լինում, մասնաւանդ ձմեռը՝ սաստիկ ցուրտ
միջոցին, յանհարծ ձիւները և սառոյցները հալվում են ու
լճակներ են ձեացնում:

Հոսանքների մէջ ծովի ջուրը տեղ տեղ զրեթէ բոլովին
անշարժ է. ինչպէս՝ Առլանտեան և Մեծ ովկիանոսների հիւ-

սիսային մասում, $20^{\circ}-40^{\circ}$ մէջ, հոսանքները ցամաքի ափե-
րով մեծ պտոյտներ անելով միջի ծովը զրեթէ անշարժ է
մասում, որով նոցա յատակներն ել հանդարտ մնալով՝ աճել են
նոցա վերայ ծովային սէղ կամ եղեղնախոտ, որոնք հասել են մինչեւ
ծովի մակերևոյթին այնքան խիտ, որ նաւերը դժուարանու մէ են
նոցա միջով անցնել ու միշտ նրանցից խուսափում են: Այնպիսի տե-
ղերը կոչվում են Սարգուման ծովէր. (ինչպէս Առլանտեան և Մեծ
ովկիանոսներում):

Ի՞նչ է ծովային հոսանքն. Կա ի՞նչեց է առաջանում.
Մալերի արելց տաքացնելուց առաջացած շաժմունքը ի՞նչ սանի նման է:
Ի՞նչ բան է արգելում հոսանքների ուղղութեանը:
Քանի՞ է բաժանուած նա և ո՞րոնք են:
Եթե երկու հակառակ հոսանքներ հանդիպն ի՞նչ կառաջանայ:
Աշխարհին ամենամեծ ջրապտոյան ո՞րն է:
Հոսանքները մի երկը օդի վերայ ի՞նչ աղդեցութեանի կարող են ունենալ:
Գոլֆսթրօմը Եւրոպայի համար ի՞նչ նշանակութեան ունի:
Եւրոպայի ո՞ր կողմը առաւել տաք է, արելեան, թէ արեմտեան:
Ի՞նչ բան է Սարգասեան ծովը: Ո՞ր ոմիկանոսում կան այդպիսի ծովեր:
ՀՈՎԱՐ:

Ողի շատ կամ քիչ շարժմունքին ասում ենք հող կամ
տաք: Երկրիս վերայ հողմը կամ օդի հոսանքը առաջանում է
մի և նոյն պտտմառից, ինչեց որ առաջանում է ծովի հոսանքը.
այն է՝ արել երկրիս վերայ մի տեղ աւելի է տաքացնում և
մի ուրիշ տեղ սակաւ: Բնականապէս՝ օդի շարժողութիւնը պէտք
է բոլորովին կանոնաւոր լինէր և նմանուէր օդի այն հոսանքին,
երբ պտտահում է մի տաք սենեակի գուռը բանալիս: Օդի
հոսանքը մի տաք և մի ցուրտ սենեակի կիսարաց դրան միջով
երկու կերպ է լինում: մէկը՝ մի սենեակի տաքացած օդը զրան
բարձրի կողմից հոսում է դէպի ցուրտ սենեակը, իսկ միւսը՝
ցուրտ սենեակի տաք օդը նոյն զրան ցածի կողմից մանում է
տաք սենեակը: Այս կարող ենք հետագայ կերպով պարզել

թէ որ ճրագ մօտեցնենք այն կիսաբաց դրան վերի ճեղքին, ճրագի բոցը կը թեքուի դէպի պալ սենեակը, կը նշանակէ որ նա, այսինքն բոցը, օդի դէպի այն կողմը ունեցած հոսանքի ազգեցութիւնից է ստիպվում այն կողմը թեքուիլ. իսկ եթէ մոմը ցածացնենք մինչեւ դրան սեմք, ճրագի բոցն ընդհակառակն դէպի տաք սենեակը կը թեքուի: Օդի այսպիսի կանոնաւոր շարժումն պիտի պատահէր նոյնպէս և երկրագնդիս վերայ. տաքացած օդը երկրիս երեսից վեր բարձրանալով՝ պիտի գնար տաք երկիրներից դէպի սակաւ տաքութիւն ունեցող երկիրները. այսինքն՝ Հասարակածից դէպի բևեռները, իսկ բևեռների ցուրտ օդը պէտք է ցածրց, այն է՝ երկրիս մակերեսոյթին շփուելով՝ գնար բևեռներից դէպի Հասարակածը: Այսպէս եղած ժամանակը մենք միայն երկու տեսակ հողմը պիտի ունենայիք. Հասարակածոյն և Բերդաշտին: Բայց՝ երկրիս վերայ հողմերը փչում են ոչ թէ միայն Հասարակածից դէպի բևեռները և բևեռներից դէպի Հասարակածը, այլ և զանազան ուղղութիւններով փչող հողմեր էլ կան: Նոքա առաջանում են այլ և այլ պատճառներից. մէկ՝ երկրիս մակերեսոյթը ծածկուած է երկու զանազանակերպ մարմիններով, այն է ջրով և ցամաքով. սրանցից ցամաքը շուտ է տաքանում և ուշ սառում: Երկրորդ՝ ցամաքի վերայ եղած բարձրագագաթ սարերն էլ օդի հոսանքների ուղղութիւնը խոտորում են այնպէս, ինչպէս որ մայր ցամաքները շեղում են ծովի հոսանքների ընթացքը: Հողմերը կրում են հորիզոնի այն կողմի կամ այն երկրի անունը, որտեղից որ նոքա փչում են. և կամ թէ զանազան պատճառներով անուններ են ստացել: Հողմերի հոսած տարածութեանը նայելով կարելի է նորանց երկու մասերի բաժանել: Արեւադարձայնին՝ այսինքն այնպիսի հողմեր, որոնք փչում են արեւադարձների մէջ և Արեւադարձայնին՝ որոնք արեւադարձներից դուրս երկիրների մէջ են փչում: Առաջինները չափանուոր են, իսկ երկրորդները՝ անհանուն են: Կանոնաւոր հողմերն են Պատառաները և Մասսաները: Պատառաները միշտ մի և նոյն ուղղութիւնով են փչում: Արեւ-

քից արև մօւտք՝ Հասարակածի երկու կողմերով: Իսկ Մասսաները փչում է Հնդկաց ովկիանոսում՝ տաք դօսու մէջ: Սա իւր անոնը ստացել է արաբական էշանակ բառից, որովհետեւ նա կանոնաւոր կերպով իւր հոսանքի ուղղութիւնը փոփոխում է, այն է՝ կէս տարի փչում է արևելահիւսիսից դէպի արևմտահարաւ և կէս տարի շաբաթակառակ. կամ կէս տարի հիւսիսային կիսագնդից փչում է դէպի հարաւային և կամ Ասիօյ (Հնդկաստանի և Հնդկաշխնու) ափերից դէպի Ափրիկայի ափերը և կէս տարի ընդհակառակն: Ապրիլ ամսից մինչեւ Հոկտեմբեր փչում է հարաւից հիւսիս, իսկ Հոկտեմբերից մինչեւ Ապրիլ՝ փչում է հիւսիսից հարաւ: Մուսանի այսպիսի ուղղութեան պատճառու այս է. նայելով թէ որ կիսագունդը աւելի է տաքացել. երբ հիւսիսային կիսագունդը հարաւայինից աւելի է տաքանում (Ապրիլց Հոկտեմբեր), այն ժամանակ հողմը հարաւային (ցուրտ) կիսագնդից դէպի հիւսիսային (տաք) կիսագունդն է ուղղում, իսկ երբ հարաւային կիսագունդը հիւսիսայինից աւելի է տաքանում (Հոկտեմբերից Ապրիլ)՝ հողմը հոսում է հիւսիսային ցուրտ կիսագնդից դէպի հարաւային տաք կիսագունդը:

Ծոյց տուէք քարտէլի վերայ թէ Պասատաները աշխարհիս ո՞ւ մասերէ և ո՞ւ ավելանունների վերայ են հոսում:

Ցոյց տալ աշխարհացոյցի վերայ այն տարածութեանը, որի վերայ փչում են Մուսանները:

Արեւադարձներից դուրս փչող հողմերը, Հիւսիսային կիսագնդում, ըստ մասին փչում են հարաւա-արևելմուտքից դէպի հիւսիսա-արևելք և ընդհակառակն: իսկ Հարաւային կիսագնդում՝ հիւսիսա-արևմտից դէպի հարաւա-արևելք և ընդհակառակն:

Ցոյց տալ քարտէլի վերայ արևադարձները դուրս փչող հողմերէ ուղղութեանը:

Բայցի նկարագրած օդի զլխաւոր հոսանքներից կան նոյնպէս և ուրիշ հոսանքներ էլ, զորօրինակ՝ Մամադնեայ հողմեր, Փալերիներ: Թալլաս, Հարմատան, Սաման, Շամսին, Ելրաչչ, Ֆէն, Ալշան, և շատ ուրիշները:


Օրովակնեաց ասվում են այն հողմերը, որոնք ծովեղերներում են փչում՝ ցերեկը ծովից դէպի ցամաք, իսկ գիշերը՝ ցամաքից դէպի ծովը։ Սորա այսպիսի փչելու պատճառն այն է, որ ցերեկը ծովը կամ ջուրը ցամաքից կամ հողից աւելի սառն է լինում, իսկ գիշերը՝ ընդհակառակն, ցամաքը ծովից աւելի լինում։ Նորա հոսանքը պարզ երեսում է ծովեղը այցուրտ է լինում։ Նորա հոսանքը պարզ երեսում է ծովեղը այցուրտ է դէպի ցամաքը, իսկ գիշերը անցնում է դէպի ծովը։

Փոթորիկ կամ Մըրեն օդի մէջ կազմվում է այն պատճառից, ինչց որ առաջանում է ջրապայտը ովկիանոսի մէջ։ այսինքն օդի երկու հոսանքների միմեանց հանդիպելուց, որով փոթորիկին կարելի է անուանել նոյնպէս և օրորդարոյա։ Երբեմն փոթորիկը այնքան ոյժով է փչում, որ արմատախիլ է անում աշարժին ծառեր, թռցնում է աների ծածքեր, ցիր ու ցան է առում ծանր թնդանօթներ և այլն։

Հատ հանդարտ հողմ՝ զեփեւուր, մի ժամաւայ մէջ 5,400 ոտնաչափ է վազում, միջակ հողմ՝ -20,000, սաստեկ հողմ՝ -200,000 փոթորկը՝ -300,000 և մըրեկը՝ -480,000 ոտնաչափ կամ 137 վերտից աւելի։ Փոթորեկները փչում՝ լսում մեծի մասն արևագարձային երկերներում՝ հասարակածի երկու կողեն լսում մեծի մասն արևագարձային երկերներում՝ հասարակածի երկու կողեն մըրեւմ, 15°-20° հետխային և հարաւային լայնութեների մէջ, գըլեամբում և որպազէս քարայերեան և Մէքսիկայի ծոցերի վերայ, Անթէեան կղզիների և Հիւսիսային Ամերիկայի արևելեան բակերի մօտ, Աֆրիկայի հարաւային և Հարաւատաքելեան ափերի վերայ, Ասիոյ հարաւատաքելեան կողմը և Հարաւային ու Արևելեան ջենաց ծովերի մէջ և այլն։

Թալլուտը նոյնպէս վասնդաւոր հողմն է ու այսպէս է ձեւանում։ Երկնքի վերայ նախ երեսում է մի փոքր սև ամպ, որ հետըգհետէ մեծանալով ձագարաձեւ ցած է իջնում։ Եթէ այս երեսյթը ծովի վերայ պատահի, այն ժամանակ նորա տակ՝ երեսյթը կակսի սաստիկ կերպով խառնուիլ ու բազմաթիւ առանցք ջուրը կակսի սաստիկ կերպով խառնուիլ ու բազմաթիւ առանցք ների վերայ պտըտելով կամաց կամաց դէպի վեր բարձրանալ շուռ եկած ձագարի ձեւով և այնքան կը պտըտուի, մինչև որ շուռ եկած ձագարի ձեւով և այնքան կը պտըտուի, մինչև որ

կազմեն ջրային սիւն, երբեմն մինչև 80 ոտնաչափ հաստութիւնով, որի վերի ծայրը ամպերի մէջ կը կորչէ, իսկ ցածինք՝ ովկիանոսի վերայ կլինի։ Թաթառը որքան երկար տևէ, այնքան էլ հետզհետէ կը շատանան ջրային սիւները։ Այն սիւների միջով ջուրը կակսի արագութեամբ բարձրանալ ու ցածանալ։ Եթէ թաթառը ցամաքի վերայ պատահի, այն ժամանակ ջրի փոխանակ օդի մէջ կը բարձրանան աւաղի և փոշու ամպեր։ Թաթառը շատ վտանգաւոր երեցիթ է։ ծովի վերայ իրեն հանդիպած նաւի առագաստները մի ակնթարժի մէջ կը պոկէ, կայմները կը խորտակէ, բուն իսկ նաւը կտոր կտոր կանէ և կոնչացնէ՝ ինչպէս նորա վերայ եղած մարդիկը, նոյնպէս և բոլոր ապրանքը։ Իսկ եթէ ցամաքի վերայ պատահի, կը թոցնի օդի մէջ բաւական ծանր առարկաներ։ ինչպէս մարդ, անասուններ, տանիքներ, ծառեր և այլն, վեր կը քաշէ լշակներից և գետերից ջրեր՝ ձկներով ու գորտերով ու կը տանէ կը ձգէ շատ հեռու երկիրների վերայ։ Հայաստանի մէջ դորա փոքրիկ տեսակն է պատահում, որին տեղացիք ստունի ժամի են անուանում։



Թաթառը

Ծովագնացները հեռուից, հորիզոնի վերայ, նկատելով
ճանաչում են թաթառի յառաջընթաց սև ամպը ու երբ
աեսնում են որ նա հետղիեաէ զարգանալով թաթառ գար-
ձած դէպի իրենց է մօտենում, այն ժամանակ նորա վերայ
թնդանօթի ոռոմբեր արձակելով շատ անդամ յաջողում է,
որ նորան ոչնչացնում են. որովհետեւ ոռոմբի հետ օդ մըտնե-
լով ջրային սինի մէջ, զօրութիւնը թուլանում է և ոչնչանում:

Ծոցի ափերի վերայ՝
Ասմա-Տ որ է խորշակը, արաբական թղյն խօսքիցն է ա-
ռած իւր անունը, որովհետև ո՞ր երկրի վերայ որ սա փէ,
այլն տեղի գալար բուսականութիւնը մի դիւթական զօրութիւ-
նով թիւնաւորվում է ու բոյսերի գալար ոստերն ու տերեւները
չորանում են:

Եամբն՝ սրա անունը նոյնպէս արաբական խօսքից է առնուած, որ կը նշանակէ 50 օր. Սա այսպէս է կոչուած, որովհետև փչում է ուղղել 50 օր շարունակ, մեր գալնանամօւտից սկսած (9 Մարտի): Եթուիք, Սօլոն և Ֆէն՝ կիզող հողմեր են. նորա փչում են Ալբեցած գօսու աւազապատ մեծ հարթութիւնից (Սահարայից) գէպի հիւսիս՝ անցնելով Սիջերկարկան ծովը թէ և թուլանում են և աւազոտ չեն լինում, բայց մարդկանց թմբեցնում են:

ՀՈՂՄԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ա, Հողմերը, մանաւանդ կանոնաւորները, ինչպէս Պատ-
ստաները, Մուսաօնները և այլն՝ ծովային հոսանքների նման
ծովագնացների ձանապարհը կամ գիւրացնում են և կամ զը-
ժուարացնում:

և թ, Հողմբարը մայր ցամաքների վերայ տարածում են տաք կամ ցուրտ օդ, նայելով թէ հողմը ծովի ո՞ր հոսանքի երեսովն է անցել: Ուրեմն նրանք՝ իրուե ծովային հոսանքների օգնականներ, երկրիս վերայ տարածում են տաք կամ ցուրտ օդ:

ի՞նչից են առաջանում հողմերը:

Երկը վերայ օդի հոսանքը լ՝ նչ բանի պիտի նմանէր

Օդի հոսանքը լուսպէս է լինում տաք և ցուքու սենեակների կիսաբաց գըան մէջ:

Այս ե՞նչպէս կարող էք հաստատել:

Երկընա Երեսին օդը Խակապէս լ՝ Նշան պիտի Հոսէր

ի՞նչ է պատճառը որ երկրիս վերայ կան բազմատեսակ հողմել:

Հոգմերը ե՞նչ անուններով են կոչվում:

Արեաղարձային և անդրաբեաղարձային

բերվում:

Պասսատները ի՞նչ ուղղութիւնով են հոսում

Ո՞Յ Հողմերը կոչվում են Սուսան

Մուսաօն խօսքը է՞նչ կը նշանակէ

Առքա ի նէ ուղղութիւնով ևս հօսու

Նոցաւ այնպիսի հոսելու պատճառն է նչ է:

Նա եղբ է վիզում հարաւայիս կիսազնողից գէպի հւստիս և եղբ ընդ-

Նոքա ո՞լքան ժամանեակ են փչում

Ծովագնացների համար հողմուը ի՞նչ նշանակութիւն ունեն.

Հոգմերի զլբաւոր օդուժն ի՞նչ է

Եռնազօտիները կողմերի վերաբերութեամբ ի՞նչ նշանակութիւն ունեն

Յէշել զւխաւոր հողմբը ուղղութիւնները. ո՞ւ հողմը ո՞ւ և ի՞նչ
(տաք կամ ցուրտ) կը պատճառէ,
ի՞նչու մայր ցամաքների արևելքան ափերը արևադարձների մէջ աւելի
խոնաւ են արևմտեան ափերից:
ի՞նչու մայր ցամաքների անդրաբեադային արևմտեան ափերը ա-
ւելի խոնաւ են արևելքաններից:
Յէշել ծավի հոսանքների ուղղութիւնները և բարեխառն երկերները
մէջ փշող հողմբը և ասել. եւրաքանչիւր հողմը ո՞ւ կը փչէ և ի՞նչ կը
տարածէ՝ (տաք թէ պաղ):
ի՞նչու մայր ցամաքների արևմտեան ափերը աւելի տաք են, իսկ արեւ-
լեանները աւելի ցուրտ՝ (մանաւանդ Եւրոպիոյ մէջ):

ՑԱՄԱԳԻ ՄԵԶ ԳՏՆՈՒԱԾ ԶՐԵԲԸ:

ՕՌԵՍ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՉՐԵՐԸ: Երկրիս վերայ գտնուած բոլոր ջրերը (ա-
նուշ ջրերը) գուրս են գալիս ովկիանոսից և օդն նորանց ցըլ-
վում է ցամաքի վերայ: Օդը երկրագնդի ըլրա բոլոր պատած
լինելով, ծծում է ովկիանոսից ջուր, ինչպէս սպոնդ. ո՞րքան
նա շատ տաք լինի՝ այնքան էլ աւելի կարող է ջուր ծծել:
հողմերը օդի մէջ պարունակուող խոնաւութիւնը ցրվում են
ցամաքի վերայ: Օդից թափուաղ ջրերը մեզ երեսում են իրեւ
մէկ, ամպ, անցրե, չին, չարիստ, յոզ և եղանակ:

Մէկ կամ մառախուղ կոչվում է օդի միջի ջրի այն գո-
լորշերը, որ օդի ցրտութիւնից թանձրանալով՝ ցածանում են
ու ծածկում են հողի երեսը:

Արևի տաքութիւնից, երկրից բարձրացած գոլորշները
օդի մէջ ցրվում ու ցնդում են: Նոքա շատ թափանցիկ են
լինում ու չեն երեսում, բայց երբ օդը ցուրտ հողմից սառչում
է, բարձրացած գոլորշները կամաց կամաց ցածանալով և ի-
րարու մօտնալով թանձրանում ու թափանցկութիւնը կորցնում
են և օդի մէջ սե, մոխրագոյն և կամ սպիտակ գոյսերով կամ
շարժվում են և կամ կանգնում: Արանք կոչվում են ամու-
Պատահում է շատ անգամ, որ ամառուայ երեկոները երկնքի

վերայ մի փոքր ամազի կտոր չէ լինում, բայց յանկարծ, գիւ-
թական զօրութեամբ, երկինքը ծակվում է թանձր ամպով:

Ամերը երկրից մինչեւ 18,000 ոտն կարող են բարձ-
րանալ, նորանից վեր սաստիկ ցուրտ լինելով, գոլորշները այլ
ևս չեն կարող բարձրանալ:

Օդի մէջ գտնուած ջրի գոլորշները կամ ամպերը
ցրտից սեղմվում են, ծանրանում են ու կաթիլ կաթիլ
երկրիս վերայ են թափվում ու կոչվում են տնյեւ:

Աշխարհիս ամեն կողմերն միակերպ անձրև չէ գալիս.
Հասարակածի կողմերն ընդհանրապէս անձրել շատ առատ է,
թէ և երաշտ եղանակն էլ շատ է, իսկ դէպի բնեռների կող-
մը անձրել թէւ ստէպ ստէպ է լինում, բայց սակաւ քանա-
կութիւնով:


Անձրել սարերի վերայ աւելի շատ է թափվում, քան
թէ դաշտերի վերայ, որովհետեւ սարերի ցուրտը յաճախակի
ցրտից տաք և տաքից ցրտի է փոխվում: Այս փոփոխման
միջոցին եթէ սարերի վերայ ամպ լինի, իսկոյն կանձրեկ:

Տաք գոտիներում անձրեները միշտ կանոնաւոր են լինում,
որովհետեւ այնտեղի հողմերի փոփոխութիւնն էլ կանոնաւոր են
փչում:

Անձրեկ ջուրը խմելու համար շատ օգտակար չէ. նա
ջրագոյն է լինում, բայց Ալպեան սարերի վերայ պատահում է,
որ տեղ տեղ կարմրագոյն անձրեւ և ձիւն էլ է թափվում:
Ուստի ենթագրում են, որ այն տեղում գտնուած մանր ձըճի-
ներից և բուսական փոշոցն են ստանում իրենց գոյնը:

Ջրի գոլորշները օդի մէջ յանկարծակի ցրտից սառելով
վեցանկիւնի և բաղմատեսակ գեղեցիկ բիւրեղիներով թափ-
վում են երկրիս վերայ ու կոչվում են չին:

Հողմ չելած ժամանակը ձեան հատիկները մեծ են լինում,
որովհետեւ ձիւնը երկրիս վերայ թափուելիս՝ օդի միջեց հետզ-
հետէ նորա աստղեկները գոլորշները լնդունելով մեծանում են:



Հետին բիւրեղիներ:

Կարիստն է ծիւն կամ ձիւնախառն անձրե, բայց օդի մէջ երկու հակառակ ելքտրականութիւնով մի կողմից միւսը մըլուելով՝ երկրիս վերայ ընկնելը ուշանում է ու ցրախց սառելով քանի մօտենում է երկրիս, այնքան էլ նորա հատիկները մեծանում են (նորանց կամ գոլորշիներից) ծանրանում ու սաստիկ ոյժով երկրիս վերայ են թափում: Պատուհել է որ մի ֆունտ ծանրութիւնով կարկուտ է թափուել. բարեբաղտաբար այս երկոյթը սակաւ է պատահում: Կարկուտը գալիս է յաճախ գարնան վերջերին ու ամառուան սկիզբներին:

Ցոշը գիշերուայ ժամանակ, մանաւանդ լուսադէմին, խոստերի և ուրիշ առարկաների վերայ նատած ջրի կաթիկներն են:

Գիշերուայ ցրտութիւնից երկրիս երեսի բոլըր մարմինները պաղում են, բայց ոչ հաւասարատպէս: Մարմիններ կան որ շատ և ոմանք էլ սակաւ են սառչում, այս կախուած է թէ իրենց կազմուածքից և թէ իրենց գիշերից: Շատ սառող մարմինների վերայ շատ գոլորշի է խտանում, իսկ այն մարմինները, որոնք սակաւ կամ ամենեին չեն պաղում, չոր են մնում, կամ թէ քիչ են թրջվում: Ցողը աւելի առաւօտեան դէմն է նստում քան թէ երեկոյեան կամ կէս գիշերուայ, որովհետեւ մինչեւ առաւօտ արեից տաքացած առարկաները բոլորովին հազիւ են պաղում:

Ցողը լինում է միայն երկինքը պարզ եղած գիշերները, իսկ ամպամած գիշերները օդը աւելի տաք լինելով, մարմիններից դուրս եկած գոլորշիները փոխանակ խտանալու և նոցա վերայ իբրև ցող նստելու, տաք օդի մէջ ցնդվում են:

Ելրէ գիշերուայ օդը այնքան ցուրտ կլինի, որ մանր գոլորշիները սառեն, այն ժամանակ մարմիններից դուրս եկած գոլորշիներն էլ սառում են և իրեւ ձեան հատիկներ նըստում են նոցա վերայ, սրանք կոչվում են էղեան:

Օդից երկրիս վերայ գանազոն կերպերով թափուող ջրերի մի մասը գոլորշիանում, կրկին օդի մէջն է ցրվում, միւս մասը՝ երկրիս է ծծում և մի մասն էլ երկրիս մակերեսով թիվ վերայ է ժողովում կամ ահագին ձեան շերտերով, կամ սառայցներով և կամ թէ ցամաքի վերայ գտնուած մէծ ու փոքր փոսերում:

Օդի մէջ ջրի գոլորշիների շնորհիւ, պատահում են յաձախ՝ ծիսծան, որում առաջանաւ, վայալ, հայծալ, արշալոյ, վերշալոյ, հիւսայգ, շրջնլիէ հուր և արևանաւթիւն:

Ծիսծանը երկնքի վերայ երկացող եօթն գյոյններն են: Նթէ եռանկիւնի ապակու կամ բիւրեղի կտորի միջից լոյսին մարիկ տանք, նորա մէջ կը տեսնենք՝ էտրմի, նորնջի, տեղն, չոնտչ, վայ հաղոյա, մուլ հաղոյա և մասիշանի գյոյներ: Անձրեի ժամանակ՝ ամպերի միջից, երբ արեւի ճառագայթները անձրեի

մանր կաթիլներին խփեն, նոցա վերայ այն եօթն գոյները՝
առանձին առանձին՝ երկնքի երեսը կամարածւ կ'երեան։ Այն
գոյնաւոր կամարն կոչվում է ծիտծան կամ ծիրանի գոտի։ Նորա
լոյսը երբեմն անդրադառնում է մօտակայ ամպերի վերայ ու
ձևացնում է երկրորդ և երրորդ ծիածանի կամար։ բայց վեր-
ձևները աղօտ լոյսով են լինում։ Ծիածան կարող է ձեւանալ
նաև ուրիշ պատճառներից ել երբեմն մեծ ծովերի կամ
զաշտերի վերայ կանգնում է շատ բանձր գոլորշի, ձեւանում է
այնտեղ ծիածան, նոյնպէս և ջրալացի անիներից դուրս ցո-
ղած ջրի մանր կաթիլների վերայ ել փոքրիկ ծիածան է երե-
սում։ Սապոնի պղպջակների և հին ապակիների վերայ շատ
պայծառ երեւում են ծիածանի եօթն գոյները։

Ա. մկերի մէջ հաւաքուած երկու տեսակ ելեքտրականու-
թիւնները մէկ մէկի երբ կը հաղողուին, չոյն, չյու և կը
հանեն։ Ձայնը կասուի, որորուն, լոյսը՝ ֆույշն, իսկ կրակը՝
հայծակ։ Պատահում է երբեմն, որ առանց որոտմունքի ու ամպ
չելսծ ժամանակն էլ երկինքը փայլատակում է. որոտմունքի
չելսծ ժամանակն էլ երկինքը փայլատակում է. որոտմունքի
թում (փայլիկնում) 1100 օտնաշափ է գնում։ Նկատուած է,
որ երկրիս վերայ մրրիկները, փոթորիկները, որոտմունքը և
կայծակները հետեւել կանոնով են լինում։

ա. Հասարակածից հեռու երկիրներում սակաւ են պա-
տահում։

բ. Բաց ծովերում ո՛րքան ափերից հեռու լինի, նոյնպէս
նոքա սակաւ են լինում։

գ. Որուսաստանում և Գերմանիայում նոքա գալիս են արե-
մուտքից և հարաւարեւմտից, այսինքն ովկիանոսից՝ գոլորշե-
ների մեծ աղբիւրից։

և դ. Նկատուած է որ փոթորիկները, կարկուտը և այն,
անտառների վերայ սակաւ են լինում։

Կայծակը խփում է երկրիս վերայ գտնուած ընդհանրա-
պէս բարձր և սրածայր մարմիներին, ինչպէս՝ սրածայր սարե-

րին, աշտարակներին, եկեղեցիներին, բարձր ծառերին և այն,
նորանց վերայ խփելով՝ քանդում, այրում ու փշացնում է։
Սորա պատճառը երկրիս միջի կենտրոնաձիգ ոյժն է, որ ամ-
պերի մէջ գոյացած ելեքտրականութեանը յաղթելով՝ դէպի
իրան է քաշում։

Կան կենդանիներ, որոնք սաստիկ ելեքտրականութիւն-
ունեն. օրինակ սև կատուն. եթէ մութ գիշեր ժամանակ նորա
մազերը հակառակ կողմը շփենք, թեթև ձայթմունքներ կը
լսենք և կայծեր կը տեսնենք։ Այս պատճառաւ, որոտմունքի
ժամանուկ կատուները ու շները փախչում են ու ապահով տե-
ղեր են ծածկվում։ Կան նոյնպէս ուրիշ շատ ելեքտրականու-
թիւն ունեցող մարմիններ, ինչպէս սաթը, կնքամոմը և այնու-
թիւն ունեցող մարմիններ, ինչպէս սաթը, կնքամոմը և այնու-

Որոտմունքի կամ կայծակի ժամանակ շատ վտանգաւոր է
սրածայր շնուրածների կամ բարձր ծառերի տակ կանգնելը,
որովհետեւ, ինչպէս ասացինք, կայծակը սիրում է առհասա-
րակ բարձր մարմիններին շանթել և մանաւանդ՝ երկրիս ելեք-
տրականութիւնը այդպիսի մարմիններից է դէպի վեր սլանում։

Կայծակի կրակի երկայնութիւնը 10—15 վերստ է լինում։

Կայծակից ազատուելու համար լուսաւորեալ երկիրնե-
րում, մարդիկ մեծ և բարձր շնուրածների վերայ տնկում են
մի բարձր ձողը, որի ծայրին կայ մազնիսացեալ պողպատ. այն
պողպատից մետաղեայ թեւեր են կապում, որոնց միւս ծայ-
րերը հողի կամ շատ խոր ջրհորի մէջ են թաղում։ Երբ ամ-
պերը ժողովում են և սկսում է որոտմունքը, այն մազնիսա-
ցեալ ձողը անմիջապէս երկնքի ելեքտրականութիւնը դէպի
իրեն է քաշում և կամ ցրվում է. որով շնուրածներին էլ կայ-
ծակից վնասուելուց միշտ ազատ և ապահով է մնում։ Այն
գործիքը կոչվում է շանթարգել նրան հնարել է Ամերիկացի
երեւելի բենիամին Ֆրանկլինը՝ 1755 թուին։

Առաւտաները, քանի որ արեւ հորիզոնից 18°—ցած է,
նորա լուսի կարմիագոյն ճառագայթները մեր մթնոլորտի վե-
րայ հորիզոնից բարձր են խփում ու փայլում են մինչև որ

արել հորիզոնից կը բարձրանայ: Այն կարմրագոյն լոյսը կոչ վում է արշալյա, որ արել ծագելուց երբեմն մի ժամկից աւելի ակած (մանաւանդ ամառը): Նոյնպէս և երեկոյեան-ները, արել մայր մանելուն պէս, արեմաեան բոլոր հորիզոնը կարմրում է. այս կարմրութիւնն էլ ասվում է վերջալյա: Ամառը մինչև $\frac{2}{3}$ ժամէ է տևում:

Մթնոլրսն որքան թանձր լինի, արշալյան ու վերջալյան
էլ այնքան մեծ ու տարածուած կը լինի:

Հիսուսայգը կամ Հիսուսակայլ լուսաւոր ամպի նման կար-
մրագոյն, երբեմն լոյն ծագանչներով, երբեմն փայլուն գօտի-
ներով՝ լոյս է: Նորա կենդրոնը կամ ամենալուսաւոր կողմը
դէպի հիւսիսային բևեռն է թեքուած լինում: Սա ըստ մեծի
մասին բևեռների մօտ երկիրների հիւսիսային հորիզոնի վերայ
է երեւում՝ արել մայր մանելուց երեք կամ չորս ժամից յե-
տոյ: Հիւսիսայգը երբեմն այնքան զօրաւոր է լինում, որ մինչև
մեր կողմերի հիւսիսային հորիզոնի վերայ էլ է երեւում: Այս
երեսի իսկական պատճառը դեռ ևս յայտնի չէ: (Ուսում-
նականները ենթադրում են, որ մագնիսական ելեկտրականու-
թիւնից է առաջանում):

Երջունէն հաւը բոցի պէս լոյս է, որ ժամանակ ժամա-
նակ գերեզմանոցներում կամ խոնաւ տեղերումն է երեւում: Ուս-
միկները շատ աւելորդապաշտական կարծիքներով այս կրակիցը
վախենում են. բայց վախենալու այստեղ բան չկայ. Սորա բուն
պատճառը փոսփորեան ջրածին գաղն է, որ մարմիների փըթե-
լուցն է առաջանում: նա օդի հետ միանալիս բանկվում և
մինչև գաղն հատնելը վառվում է:


Արեւանանութիւնը այն երեսի մէջ է խփում, որ երբեմն արեկի լոյսը
իւր զիւմացի ամպերի վերայ այնպէս է խփում, որ նոյն ամ-
պերի վերայ ուրիշ արեներ են երեւում:

Ցամաքի վերայ եղած ջրերը ո՞րտեղից են յառաջանում:
Ավելանումներէց ջրերը ի՞նչպէս են տեղափոխում ցամաքների վերայ:
Օդը ե՞րբ աւելի շատ ջուր է ծծում և ե՞րբ սակառ:

Ծովիլրէց բարձրացած խոնաւութիւնը ո՞վ է տարածում ցամաքի վերայ:
Օդեց ջրերը ի՞նչ ենչ կերպով են թափվում ցամաքի վերայ:
Ի՞նչ է մէրը, ամպը, անձրելը, ձիւնը, կարկուտը, ցողը և եղեամը:
Օդի մէջ եղած գոլորշներում ի՞նչ ինչ երեսիթներ են դունում:
Ի՞նչ է ծիածաննը: Քանի՞ գոյներ է ունենում նա,
Ի՞նչ է որոտմանը: Ո՞քան տեղ է լսվում նորա ձայնը:
Ի՞նչ է փայլակը և կայծակը:
Կայծակը ի՞նչ խանմեր է տալիս:
Ի՞նչ գործերով կարելի է աղատ պահել շինքերը կայծակէց:
Ո՞վ է հնարել շանթարգելը:
Արշալյուր և վերջալյուր ի՞նչ են:
Ի՞նչ է հիւսիսայգը:
Ի՞նչ է շրջմուկի հուը:
Ի՞նչ է արեւանմանութիւնը:

ԶԻՒՆԵՐԸ ԵՒ ՍԱՌՈՅՑՆԵՐԸ:

Երկրիս վերայ ձիւնը և սառոցները ընդհանրապէս շատ
ցուրտ տեղերն են ժողովում: այն է ցուրտ գօտիներում և
բարեխառն ու տաք գօտիների բարձրագագաթ սարերի վե-
րայ: Սարի այն մասը, որ ծածկուած է յաւերժական ձիւնով՝
ասվում է չինոտագ մասն, իսկ այն գիծը որտեղ ձիւնապատ
մասն է աւարտվում, կոչվում է հարակոն կամ յաւերժակոն չեան
սահման: Մշտական ձեան սահմանը հասարակածի տակ եղած
սարերի վերայ շատ բարձր է, իսկ մի սար ո՞րքան հեռու լինի
հասարակածից, նորա մշտական ձեան սահմանն էլ այնքան
ցած կը լինի: Սորա պատճառը պարզ է. հասարակածի տակ
օդը արեկից աւելի է տաքանում, քան թէ հասարակածից դուրս:
Տաք գօտու մէջ մշտական ձեան սահմանը ն վերստ բարձր է
լինում (ծովի մակերեւոյթից), բարեխառն երկիրներում՝
4 վերստ, Ուսումատանի և Սիբիրի մէջ՝ $1\frac{1}{4}$ վերստ, իսկ ցուրտ
գօտիներում՝ ծովի մակերեւոյթիցն է:



Մշտական ձեսն սակմանը, տաք, բարեխառն և ցուցու դօմիներում:

Աշտական ձեռն ցածի փեշերի վերայ ձիանը մեծ ու փոքր ձորերի և կամ հովիտների մեջ սառչում է և հատիկանման փուլսը սառոցը է զառնում։ Այս տեսակ սառոցները շատ տարիներ միմեանց վերայ ժողովուելով՝ կազմում են սառչություններ։

Սառցադաշտերը ամառը տաքանալով, ծանրութիւնից
վոքր առ փոքր հովիտներից ցած են իջնում ու իրենց ըրջա-
պատող սարերի փեշերից ահազին մեծութիւնով քարեր են
պոկում ու սարերից հեռու, հովիտների մէջ են տանում; Առ-
հասարակ սառցադաշտերի սոսրին, աջ ու ձախ կողմերը այն-
ունիարժ են շրջապատուած լինում:

Սառցադաշտերի տակից կաթիլ կաթիլ հալուած ձներից
առուակներ են գոյանում, շատ առուակներ միանալով՝ կազ-

մում են գետակներ. իսկ նրանցից էլ—գետեր:

Սառցադաշտերի նշանակութիւնը և օգուտը շատ մեծ է:
Նոքա գետերի գոյացութեան սկզբնապատճառներն են: Մեծ
ու սուեր սառցաւաշտերի շնորհիւ մշտահոս են:

Պատահում է՝ որ սեպացեալ սարերի և ձորերի փեշըրի
վերայ ժողովուած ձիւնից մի կտոր է պոկվում ու արագութիւ-
նով դէպի ցած է զլորվում։ Նա ո՞քան ցածանայ այնքան ի-
րեն կպած ձիւներովը կը մեծանայ և կուժովանայ։ Ձեան
այսպիսի կտորները կոչվում են չեռն հիւն։ Նատ է պատահում
որ ձեան հիւսերը աւերում են ամբողջ հովետներ, դաշտեր,
գիւղեր և ծանապարհներ, արգելում են գետերի ընթացքը,
որ յետոյ տաքութիւնից հալուելով հեղեղներ են դառնում,
որոնք ափերից դուրս գալով ողողում և աւերում են դաշտեր,
արտեր և գիւղեր։

Պուրը բնականապէս (իբրև հեղուկ) երկրիս վերայ լինում
է զանազան կերպերով. մենք իւրաքանչիւր տեսակին տալիս ենք
առանձին առանձին անուն այն է. աշխեր, գետա, գետ, շիճ
ծառին և ծով:

Զիւները և սառոյցները առհասարակ ո՞ր տեղերումն են ժողովում:
Սարբ ո՞ր մասն է կազմում ձիւնապատ մասն և մշտական ձեւն սահման:
Հասարակածեց որքան ո՞ր կեռանանք, մշտական ձեւն սահմանն է՞նչ-

Զի՞նապատ մասի սորուստներում ի՞նչ է կազմվում սառցադաշտերուն Զի՞նապատ մասի սորուստներում ի՞նչ է կազմվում սառցադաշտերուն Ասպարուսը և Անդրեասը ականա չեն ականա չեն ականա չեն ականա չեն

Են առնելմէ

Հայած սառցակաշտեղեց Ե՞նչեք են կազմվում:

ՕՇՈՒՆԻ Են ամենատղվարութ սառցադաշտերն

զեան հիւսը թ ոչ առօքէ գուշակ է ու ուժում
է իւրա մեռա զուրբը մեղ ի՞ն կերպով են երեսում

ԱՂԲԻՒՐՆԵՐ:

Անձնագիր պատճեն և պատճենահայութ վիճակաբառականը:

Առ Հերք կամ աչս ասվում է այն տեղը՝ ուր ջուրը գետնի տակից դուրս՝ վեր, է խփում: Այնպէս աղբիւր կայ, որի ջուրը մի քանի սաժէն բարձր է ձգում: Աղբիւրները գոյանում են օդից ցամաքի վերայ թափած ջրերից, որոնք երկրիս կեղեսի քանի մի տեսակ շերտերիցն են ներս ծծվում, ինչպէս՝ աւազային, կրային և այլն:

Ջուրը երկրիս տեսակ շերտերիցը ծծուելով, թափանցում է այնքան ցած, մինչև որ կը հանդիպէ նորան այնպիսի մի շերտ, ինչպէս կաւային, գրանիթեայ և այլն, որ ջրին բռնովին կարգիլէ ցած իջնելու. Ջուրը այս շերտերի մէկին հանդիպելով՝ կանգ կառնէ ու այսպէս հետ զհետէ այնտեղ մեծ քանակութիւնով ջուր կը ժողովուի: Եթէ անթափանց շերտը զառիվայրեր ունենայ, ջուրը կը մտնի ցած՝ մինչև այդ շերտի վերայ եղած բոլոր խոր ու դատարկ տեղերը կը լցնի:

Ինչպէս սառցադաշտերից, նոյնպէս և աղբիւրներից կազմվում են առուակներ, գետակներ, գետեր և այլն:

Աղբիւրներները զանազանվում են իրենց արձակած ջրի ժամանակամիջանով, ջրի տաք և պաղ աստիճանովներ, համովն ու հոտովներ:

Մշտական այն աղբիւրներն են կոչվում, որոնք անսպառ ջուր են արձակում: Ժամանակառուր նոքա են՝ որոնք տարուայ մի որոշ ժամանակն են միայն ջուր արձակում, օրինակ՝ գարնանը, աշնանը և անձրևներից յետոյ: Ըստ հատուաղու կոչվում են այն աղբիւրները, որոնք թէ և որոշեալ ժամանակին են միայն հոսում, բայց և որոշեալ ժամանակին էլ զադարում են:


Ըստ հատուող աղբիւրներից նշանաւորներն են՝ Մեծ Գելյեր և Ստրօքուր՝ Խոլանդիոյ մէջ:

Աղբիւրները լինում են ինչպէս պաղ, նոյնպէս և տաք և մինչև անդամ եռացող ջրերով:

Աղբիւրների այդ տեսակ զանազանութիւնը կախուած է

նորա գետնի տակից դուրս եկած խորութիւնից: Զուրը ո՛քան խորից դուրս գայ այնքան էլ նա տաք կը լինի:

Արթէզէան աշխերներ: Ֆրանսիոյ Արթուրա (d'Artois) գաւառում՝ Ժերմանի գարի վերջերումը առաջին անգամ փորձեցին մի տեսակ գործիքով ծակել գետինը շատ խոր, ու տաք ջուր ստանալ: Փորձը յաջողուեց ամենայն կատարելութեամբ. գետնի շատ խորերից, ո՛քան որ ծակել էր գործիքը, ջուրը ամենայն ոյժով վեր նեսուեց ու մշտարուխ արհեստական տաք ջրի աղբիւր գարձաւ: Սովորութիւն եղաւ ուրիշ շատ տեղերում էլ այնպիսի ջրհորներ ծակել նորանցից մի քանիսը շատ խոր են. ինչպէս Փարիզի Գրնէլ թաղի աղբիւրը, որից 1,800 սանաչափ ($\frac{1}{2}$ վերստից աւել) խորից և հողի երեսիցն էլ 50 ոտ. բարձրութեամբ օրը (24 ժամուայ մէջ) 330,000 վերքո ջուր է գուրս շպրավում: Նօրա ջուրը 20° ջերմութիւն ունի: Պակաս խոր չէ և Պետերբուրգի Արտէզէան ջրհորը. (1,600 ոտն խորութիւնից օրը 300,000 վերքո ջուր է գուրս գալի): Այսպիսի ջրհորները կոչվում են Արթէզէան ջրհորներ:



Թէ և գր անթափանց շերտեր են, իսկ ու թափանցի շերտն է, որի յատակում ժողովուած են վերել անթափանց շերտի ձեղքերից անցած անձրևների և ձեւների ջրերը ու կանգնում են գր անթափանց շերտի վերայ: Կողեւ երեսն է: Ե՛ ջրհորի ծակած խորովակն է, որից ջուրը այնքան բարձր է գուրս նետում: որբան բարձր որ գտնվում է նորա ջրամբարը՝ ու շերտի վերի մասը:

Տաք ու եռացող ջրերով հարուստ է նւրոպան։
Ամենատաք ջուր ունեցող աղբիւրն Գևյղերն է։
Աղբիւրների հոտերն ու համերն էլ զանազանակերպ են։
Նորա լինում են՝ անուշ, աղի, դառն, ծծմբային, թթու, կրային, ցմինտային, և դիւրավառ ջրերով։ Բացի անուշ ջրով աղբիւրից միւս բոլորը մի խօսքով կոչվում են հանգային աշխեր։ Հանգային աղբիւրների ջրի հոտի ու համի պատճառը երկիս կեղեկի շերտերի բաղադրութիւններն են։ այսինքն՝ նայելով թէ ջուրը ի՞նչ տեսակ հանգերի միջից է անցնում։ Նորա համն, հոտն և մինչև անգամ գոյնն էլ է ստանում։ Թթուաշ, աղի, դառն, ծծմբային և այլն, այս տեսակ աղբիւրները, կոչվում են նոյնակս բժշկական աղբիւրներ, որովհետեւ նորա իրենց յատկութիւններով բժշկում են զանազան հիւանդութիւններ։

Կրային կամ հայութ բաղադրութիւն ունեցող աղբիւրները այնպիսի յատկութիւնով ջրեր ունեն, որ եթէ նոցա մէջ փայտի կտոր և կամ այլն նիւթեղեն ձգենք, քանի մի ժամանակից յետոյ նոցա վերայ կրային կեղեւ կը կապուի։

Կրային բաղադրութեամբ աղբիւրներով շատ հարուստ է Հայաստանը։ Նորանցից ամենանշանաւորն է Տաթեւ գեղեց մօտ Ուռոտն գետի (այժմ Քազար չայ) վերայ այնպիսի աղբիւրեց գոյացած կամուրջն, որին տեղացիք Սատանի կամուրջ են ասում։ Նորա լայնքը 12 սաժէն է, իսկ երկայնութիւնը 20 սաժէն։ Ինչպէս յեշեցինք, նա կազմուած է գետի աջակողման եղերեց բղիւած կրային սաստիկ բաղադրութիւն ունեցող աղբիւրեց։ Այն աղբիւրը մինչև օրս էլ բղիւում և մի քանի ոտ ակեցը հեռանալով կեր է գաւանում ու քարանում է։

Ութենաբային աղբիւրը այն յատկութիւնը ունի, որ եթէ նորա մէջ երկաթեղեն բան ձգենք, փոքր ժամանակից յետոյ երկաթի երեսը պղնձեայ կեղեռով կրծածկուի։

Այսպէս աղբիւրներ նոյնակս շատ կան Հայաստանում։ Ենչպէս՝ Արցախ նահանգի (այժմ Մեղրու գաւառակ) Աղաւակ գիւղումը։ Այն աղբիւրները լաւ օդուտ են տալիս մարդկանց իրենց ազնիւ և առատ պղնձով։

Հայաստային տաք ջրերով կամ ջերմուկներով, իրենց բժշկաց կան յատկութիւններով, նշանաւոր են նւրոպայում։ Կարպատ, Թէփլից, Զելթեր, Բագէն—Բաղէն, Էմա, Սփա, Պետական գորսք և ուրիշ շատերը, Հայաստանի և Վրաստանի մէջ էլ կան հանգային շատ աղբիւրներ։ ինչպէս՝ Թիֆլիսում, Բօրդոմում, Աբասթումանում, Վայոց ձորի մէջ Դուշերիլագ գիւղի մօտինը և ուրիշ շատ տեղեր։

Կան և մի տեսակ հանգային աղբիւրներ, որոնք թէպէտ տաք չեն, բայց իրենց մէջ դիւրավառ իւղ և գաղ գտնուելով, իրենք իրենց յանկարծակի և կամ թէ կրակի մի կայծով բռնկում են։ Այս տեսակ աղբիւրներ և հորեր շատ տեղ կան։ Նշանաւորներն են։ Հիւսիսային Ամերիկայում եղածը և Կովկասեան շղթայի երկու ծայրերում (Թաման և Ալգարծն թերակղզներում) եղածները։ Մարդիկ նորանց զտելով շատ մաքուր և համարեա թէ անհոտ ու շատ պայծառ լոյսով վառելանիւթ (նաւթ) են ստանում։

Ի՞նչ է աղբիւրն։ Աղբիւրնեց ի՞նչ է կազմվում։
Աղբիւրները երարուց ի՞նչով են զանազանվում։
Ի՞նչ տեսակ աղբիւրներ են լինում։
Ընդհատուող աղբիւրնեց նշանաւորն ո՞րն է։
Աղբիւրները տաք են թէ պազ։ Տաք աղբիւրների պատճառն ի՞նչ է։ Համի, հոտի և գոյնի կողմից ի՞նչ տեսակ աղբիւրներ կան։
Նոցա համի, հոտի և գոյնի պատճառն ի՞նչ է։
Ո՞ր տեսակ աղբիւրները կոչվում են բժշկական։
Ցեմենտային և կրային աղբիւրներն ի՞նչով են նշանաւոր։
Հանգային աղբիւրնեց երկելիներն ո՞րնք են։
Գիւրալառ աղբիւրնեց ի՞նչ բաներ են։ Գլխաւորներն ո՞րոնք են։

Գ Ե Տ :

Մեծ, վազող ջուրը կոչվում է գէտ։ իսկ փոքրը—գէտուկ, վատիկ և առաւ։ Գետերը սկիզբն են առնում աղբիւրներից, սառացացացերից և լծերից։ Գետի սկսած տեղն կոչվում է առն, իսկ

ուր որ նա վերջանում է, այսինքն թափում է մի լճի կամ ծովի մէջ, կոչվում է գետաբերտն: Մի գետ միւսի մէջ թափած տեղը կոչվում է գետաբերտն: Մեծամեծ գետերը վերջանում են շատ բերաններով. իւրաքանչիւրը նորանից կոչվում է բաղադր. իսկ այն հողը, որ բազուկների մէջն է մնում բելլա է կոչվում, յունաց գելթա (Δ) տառի անունով. որի ձեխն նա շատ է նըմանում: Երբեմն՝ ծովի ջուրը մտնելով ցամաքի մէջ, գետաբերանը շատ է լայնացնում: Այն տեսակ լայնացած գետաբերանները Սև և Ազով ծովերի հիւսիսային կողմերում՝ անուանվաւմ են շիմս, իսկ Բալթիկ ծովի հարաւային եզերքը՝ հաք: Թէ լիմանները և թէ հավերը երկայն ունեղ չշրաբնով բաժանուած են լինում ծովից: Ծովը ցած ափերից ներս տարածուելով՝ ձեւացնում է ծովածքը. ինչպէս Մարաքայիրօ՝ Հարաւային Ամերիկայի հիւսիսային կողմը: Դետի ափերը որոշվում են ոչ ու չոփանունով: Եթէ երեսներս գետի դէպի գնացած կողմը դարձնենք, մեր աջ թերի կողմի ափը կը լինի աղջկալեռն ափ, իսկ ձախը՝ չորտիուշտան ափ:



Եթէ գետի յատակը ուղեղ լինի, նա առ հասարակ հանգարա կը հոսի: Դետի վերի ընթացքը աւելի յորդ է լինում քտն թէ ստորինը: Կան այնպիսի գետեր, որոնց յատակը կամ զառ. ի վայր է և կամ քարքարոտ, այնպիսի յատակ ունեցող գետը որընթաց է լինում, այն տեսակ գետը կոչվում է սահանաւուր գետ: Լինում է նաև և բոլովին սեպացեալ կամ ուղղահայեաց յատակ ունեցող գետ, նորա վերայից ջուրը ահագին շառաչումով ցած է թափում, գետի այն մասը կոչվում է ջրիմծի: Հայաստանի բոլոր գետերն սահանքաւոր են, որովհետեւ նորա հոսում են զառի վայրերի և սարահարթերի վրայով:

Հինգ աշխարհների ջրվէժներից ամենանշանաւորներն են՝ Հիւսիսային Ամերիկայում՝ Իդագօ, Միսուրի գետից ձեւացած և Նիագարա՝ համանուն գետի երիո և Օնտարիո լճերի մէջ տեղը: (Սա աշխարհիս ամենալայնն է 1,200 ոտն:) Վիկտորիա՝ Ափրիկայի մէջ, Զամբէզէ գետից, Նաֆհաուզէն և Նտաուբախ՝ Հռենոսից, Իմատրա՝ Պետերբուրգի մօտ: Ջրվէժներից ամենաբարձրն է Գալիարնա՝ Պիրենիան շղթայի մէջ, որ 1,266 ոտնաչափ բարձրութիւնից է թափում: Կան այնպիսի գետեր, որոնք հոսելով փոքր առ փոքր գետնի տակ անցնում անհետանում են և մի ուրիշ տեղից դարձեալ դուրս են գալիս ու այսպէս անհետանալով ու երեալով, իրենց ընթացքը շարունակում են մինչեւ իրենց բերանը: Այսպիսի պատահարքը գերբնական երկոյթ չէ, որովհետեւ ինչպէս որ գետնի երեսը անհաւասար է, այնպէս էլ գետնի տակը կան շատ այրեր, քարանձաւներ ու աւազոտ տեղեր. ուրեմն երբ մի գետի ընթացք այն աւազոտ տեղերին կամ փշուկներին է հասնում, բնականապէս և գետնի տակն է անցնում: Այսպէս անհետացող գետեր շատ կան Ափրիկայում: Պատահում է որ մի գետ ուկու հանքի միջով անցնելիս, իրեն բերած աւազը ուկու հետ խառն է լինում, ինչպէս են՝ Զայիրէ, Գամբիա գետերը՝ Ափրիկայում Քոլօրագօ, Սաքրամենտօ՝ Ամերիկայում և ուրիշ շատերը:

Դետի ստորին մասերում ժողովում է միշտ նորա վերին

մասերից եկած աւաղ և կամ շատ ուրիշ նիւթեր, որոնցով այն աելն գետի յատակը բարձրանում է: Եթէ այն ժողովուած նիւթերը ջրից չեն բարձրանար, կը կազմեն ծանծաղ տեղեր, իսկ եթէ ջրիցը բարձրանան՝ կ'ասուին շառած կամ հէղէղային կղզիներ: Այսպիսի աւարային կղզիները փոփոխում են միշտ թէ իրենց ձեւերը և թէ տեղերը: Առուակները և գետերը, որից կազմվում է որ և իցէ մի մեծ գետ, կոչվում է ջլակ, իսկ որի մէջ որ նոքա են թափվում՝ գլխաւոր գետ: Հողի այն տարածութիւնը որ զլսաւոր գետն է բռնում, կը լինի այն գետի ջրաբաշխութեաւում գետերի ջրաբաշխի սահմանը՝ կոչվում է ջրեածան գեծ:

Լինում է որ ջրաբաշխների սահմանը ոչ թէ սարեր և լեռնաշղթաներ են, այլ և աննշան բարձրաւանդակներ և հարթութիւններ են, որոնք յորդ անձրևի ժամանակ ջուրը մօտիկ գետերի ջրբաժան սահմանները ծածկելով՝ խառնվում են մեմանց հետ: Պատահում է և, որ սաստիկ հողմ կամ փոթուրիկ փշելով՝ մէկի կամ միւսի գետի ջուրը առաւտանում է ու ջրբաժան գետերը առ ժամանակ խառնվում են: Այսպիսի երկոյթ յաճախ է պատահում Հարաւային Ամերիկայի գետերում: Գետերը կարելի է բաժանել երկու կարգ, կան գետեր, որոնց ջուրը ովկիանոսի կամ նորա մասերի մէջն է թափվում այն տեսակները կոչվում են արփատին գետեր, բայց կան նոյնպէս և գետեր, որոնք որ և իցէ բնական յարմարութիւն չունեն թափուելու թէ ովկիանոսների և թէ նոցա մասերի մէջ, այլ թափվում են այնպիսի լճերի մէջ, որոնց ջուրը չէ խառնվում ծովերին և ովկիանոսներին, այն տեսակ գետերն ել կոչվում են հէրգին գետեր:

Ի՞նչ է գետը, նոքա երենց սկիզբը ո՞րտեղց են առնում:

Գետի ո՞ր մասն է կոչվում ակունք, բերան, վերին և ստորին մասը, ի՞նչ է բաղուկն և դէլթա:

Ի՞նչպէս աէտք է որոշել գետի ափերը:

Ի՞նչ է հաֆ և լիմանը:

Ծովալճերը ի՞նչ են:

Տար գետի ո՞ր մասն է կոչվում սահմանը և ո՞րը ջրվեմ: Ի՞նչ է նշանաւոր ջրվեմներ կան, Ո՞րն է առնեալայնը և ո՞րը ամենաշարժութեաւը:

Ի՞նչ ըաներից են գոյանում ծանծաղոտ աելերը և լցուած կամ հեղեղային կղզիները: Ի՞նչ է գետակը Գլխաւոր գետը ո՞րն է: Ի՞նչ բան է ջրաբաշխ գետի և ջրբաժան գետը և ի ձ:

Ցամաքի վերայ մի մեծ կամ փոքր փոս, որ լցուած լինի ջրով և ըրջապատուած ցամաքով, կը կոչուի լիճ: Եթէ մի բնական, ընդարձակ տարածութիւնով, փոս տեղ լցուած լինի տըզմախառն ջրով և նորա վերայ միշտ խոտ, եղեգն և կամ մամուռածի՝ կ'ասուի մակիճ:

Հիւսիսային ցուրտ գօտու մէջ կան ընդարձակ սառցապատ ձահիձներ, որոնք տեղացւոց լեզուով առանց են կոչվում: Նոցա վերայ աճում է սպիտակ մամուռ (հիւսիսային եղջերուի եղակի մունղը):

Ինչպէս գետերը նոյնպէս և լճերը բաժանվում են երկու մեծ կարգերի. մի կարգը՝ որի ջուրը թափվում կամ խառնվում է ովկիանոսի և կամ նորա մասերի մէջ, և միւս կարգը՝ որ ոչ ովկիանոսում և ոչ նորա մասերի մէջն է խառնվում: Առաջին կարգին պատկանող լճերը կոչվում են արփատին կամ արտաքին գետերի ջրաբաշխներ, որովհետև այս կարգի լճերը կամ արտաքին գետերի ջրաբաշխներ, որովհետև այս կամ թէ նոցա հետ իրենց աւելորդ ջրերը ովկիանոսն են թափում: Երկրորդ կարգի լճերը կոչվում են հերքին լճեր կամ ներքին գետերի ջրաբաշխներ, որովհետև այս կամ թէ նոցա հետ իրենց աւելորդ ջրերը ովկիանոսն են թափում: Երկրորդ կարգի լճերը կոչվում են հերքին լճեր կամ ներքին գետերի ջրաբաշխներ, որովհետև այս կամ թէ նոցա հետ իրենց աւելորդ ջրերը ովկիանոսն են թափում կամ ներքին գետերի ջրաբաշխներ կամ առանցներ, որովհետև ներքին կարգի գետերը նոցա մէջ թափուելով այլ ևս գուրս չեն գար: Արտաքին լճերի ոչ թէ միայն մակերեսոյթը, այլ և յատակն էլ ովկիանոսի մակերեսոյթից բաւականաչափ ցած է: Օրինակի համար Արևելեան մայր ցամաքում Մեռեալ ծովը, Կասպից և Արալեան ծովերը և այլն: (Մեռեալ

ծովի մակերևոյթը ովկիանոսի մակերևոյթից $\frac{1}{3}$ վերստ ցած է): Այս կանոնից դուրս են մնում սարերի մէջ գտնութղ ներքին կարգի լճերը:

Սարերի միջի լճերը ըստ մեծի մասին արտաքին կարգին են պատկանում: Սակաւ է պատահում, որ նրանց մակերևոյթը ծովի մակերևոյթից ցած լինի, այլ առ հասարակ բարձր է: Թէ՝ ամենաբարձր և թէ՝ ամենախոր յատակ ունեցող լճերը Ասիոյ մէջ են. ինչպէս՝ Բայքալ լիճը, որ արևելեան Ասիոյ սարահարթի հիւսիսային լեռների մէջն է, նորա խորութիւնը $\frac{21}{2}$ վերստ է: Իսկ Սիրի-Գեոլ լճի մակերևոյթը, որ նոյն սարահարթի արևելամտեան կողմն է՝ յատակը 4 վերստից աւելի բարձր է ծովի մակերևոյթից, նոյնպէս և Մանասարօվար լիճը՝ նոյն սարահարթի հարաւա-արեւմտեան կողմը: Սա աշխարհիս ամենաբարձր դիրք ունեցողներից մէկն է (5,400 մետր):

Արտաքին կարգի լճերի ջուրը ընդհանրապէս անուշ է, իսկ ներքին լճերի մեծ մասը բացի դառն ու աղի ջուր ունենալուց, ինչպէս որ ովկիանոսի ջուրը, գեռ վատ հոտ էլ ունի:

Արտաքին լճերը թէ գետ են ընդունում և թէ արձակում են, իսկ ներքին լճերը գետ ընդունում են, բայց չեն արձակում ու նրանց ջուրը զգալի կերպավ չէ աւելանում ու շրջակայքը չէ ծածկում, որովհետեւ նորա մէջ թափուող ջրի մի մասը գոլորշեանում ցնդում է օդի մէջ, իսկ միւս մասը՝ լճի զանազան կողմերից ծծուելով, իրրեւ աղբիւրներ՝ մօտ կամ հեռու տեղերից են դուրս գալիս:

Կան մի քանի լճեր, որոնք իրենց մեծութեան համար ծով էլ են կոչվում: Անուշ ջրով լճերի ծովեր շատ կան Արևելամտեան մայր ցամաքի հիւսիսա-արեւելեան կողմը. ինչպէս՝ Վերին, Հուռօն, Միջիգան, Երի և Օնտարիօ: Իսկ աղի լճերի ծովեր կան Արևելեան մայր ցամաքում, ինչպէս՝ Կասպից, Արալ, Մեռեալ, Թանգանայքա, Նիխանսի և այլն: Անուշ ջրով ամենամեծ լիճն է Վերին, իսկ աղի ջրով՝ Կասպից, որ և աշխարհիս ամենաընդարձակ լիճն է:

Ի՞նչ է լիձը, ճանեմը և առւեղբան: Լճերը քանի կարգ են բաժանվում: Լճերի յատակը և մակերևոյթը ծովի մակերևոյթի վերաբերութեամբ ի՞նչպէս են:

Անուանեցէք մի քանի լեռնային լճեր և ասացէք թէ իւրաքանչիւր կարգի լիձը համը և հոտը ի՞նչպէս է: Շատ մեծ լճերը ի՞նչպէս են կոչվում: Անուանեցէք երկու կարգից էլ մի քանի ծովալձեր:

ԳԵՏԵՐԻ ԵՒ ԼՃԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գետերի և լճերի ամենազլիսաւոր նշանակութիւնն այն է, որ նոքա մարդկանց հաղորդակցութեան համար ամենաշարժական ճանապարհներ են՝ ումանք աւելի և ումանք պակաս յարմարութիւններով, որը կախուած է այլ և այլ բնական պատճառներից, ինչպէս:

ա, Երկրի մակերևոյթի յատկութիւններից, որոնց վերայ հոսում են գետերը:

բ, Ջրի քանակութիւնից և

գ, Գետերի որ և իցէ գոտու մէջ լինելուց:

Այսպէս՝ բլային, լեռնոտ և բարձրաւանդակների վերայ հոսող գետերը սրբնթաց և սահմանքաւոր են ու կազմում են ջրվէժներ: Փափուկ հող ունեցող երկրի վերայ հոսող գետերը լցվում են տղմով, աւազով և ունենում են ծանծաղոտ յատակներ, իսկ կործը յատակ ունեցող գետերը ընդհանրապէս խոր չեն լինում:

Բարեխառն երկիրների գետերը գարնանը ձիւնի և սառոյցի արագ հալուելուց, յորդ անձրեներից, կարկուտներից և կամ ամառը՝ բարձր սարերում եղած ձիւների հալուելուց, նոցա ջուրը շատ է բարձրանում: Տաք գոտու գետերի ջուրը

յորդանում է արևադարձային կանոնաւոր անձրեային եղանակ-ներում:

Յուրաք և մասամբ էլ բարեխառն գոտիների գետերի ե-րեսները ձմեռը սառում են երկար կամ կարճ ժամանակով:

Այս բոլոր հանգամանքները բնականապէս գետերի ար-ժանաւորութեան վերայ մեծ ազդեցութիւն ունեն. նորանով մի գետի, իբրև ջրային ձանապարհի, նշանակութիւնը կամ կ'աւելանայ կամ կը պակասի: Խնչպէս ծովերը և լճերը, նոյն-պէս և գետերը՝ բացի նաւարկութեան յարմարութիւնից, ու-րիշ շատ շատ օգուտներ են տալիս մեզ: Մարդիկ որսում են նորանց միջեց բազմատեսակ պատուական ձկներ՝ որոնց միսր, իւղը, ոսկորը, կաշին և ձկնկիթը թէ մնունդի և թէ առե-տուրի մեծ նիւթեր են: Գետերի ջրերով ուսովվում են դաշտերը, արտերը և այդիները: Գետերի ջրերով բանում են շատ ջրա-զացներ և գործարաններ: Գետիցը հանում են նմանապէս խեցեղէններ, երբեմն էլ մարդարիտ: Բուտար, սպունդը, կէտը և ծովահորթը ովկիանոսներիցն են որսում: Ափրիկայի և Ամե-րիկայի այրեցած զօտու գետերը և լճերը լիքն են ձիագետի-ներով, կոկորդիլոսներով և ուրիշ շատ վիթխարի երկակենցաղ կննդանիներով, որոնց մարդիկ որսալով շահվում են:

Մարդիկ երկու կամ շատ նաւարկելի գետեր մեծ աշխա-տանքով և ծախքով իրարու հետ միացնում են և կազմում են ջրանցքներ կամ արհեստական գետեր, որոնց շնորհիւ կարճ միջոցում և շատ հեշտութեամբ ամեն տեսակ ծանրութիւն մի ծովից միւս ծովին են տեղափոխում: Այսպիսի արհեստական ջրանցքներ փորուած են լուսաւորեալ ազգերի մէջ շատ հին ժամանակներումն էլ և այժմ նոցա թիւը օր ըստ օրէ բազ-մանում է: Բացի գետերը՝ երկու մօտ ծովեր էլ են միացնում, խնչպէս՝ Սուէզի ջրանցքով Միջերկրական ծովը միացրած է Կարմիր ծովի հետ, որով Նւրուպայից Հնդկաստան գնալու հա-մար փոխանակ Ափրիկայի ըորս կողմով 3 ամիս պարտելու ինչպէս առաջ էր), այժմ Սուէզի ջրանցքով 10 օրումն են

Հասնում: Զեռնարկած են փորել նոյնպէս Փանամայի պարա-նոցը և միացնել երկու ովկիանոսները:

Ի՞նչ բաներէց կախումն ունի գետերի և լճերի գլխաւոր Կշանակութիւնը Բարեխառն գոտիների գետերը ե՞րբ են յոթանում: Իսկ այբուցած գոտիներումն ե՞րբ:

Ո՞ր գոտու գետերն են սառում:

Ո՞ր Եւկերների գետերն են լինում սահմանքաւոր:

Փախուկ երկը գետերն ի՞նչպէս են լինում: Իսկ կարծը յատակ ու-նեցողները ի՞նչպէս:

Գետերը և լճերը ե՞նչ են օգուտներ են տալիս մզ:

Ի՞նչ է ջրանցքը:

Ի՞նչ ծովեր են միացրած ջրանցքով:

Հինգ. ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ԱՄԵՆԱԳԼՈՒԹԻՈՒ ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ:

(Գետերը և լճերը ցոյց տալիս պէտք է ասել նմանապէս, թէ իւրաքան-չեւը զետ ո՞ր աեղից է առնում իւը սկզբը, ո՞ր լեռնաշղթայից, նորա ո՞ր փեշեցից, ե՞նչ ուղղութիւնով և ե՞նչ տեսակ երկը վրայով (ըստձբալանդակ թէ ցած) է հոսում, ո՞ր ովկիանոսի կամ ծովի և կամ լճի մէջ է թափվում: Այս եղանակով աշակերտի կամար մի և նոյն ժամանակը անցած դասերի կրբե-նութիւն է լինում: այն է՝ երկիս մակերեսով թի կազմակերպութեան, ցամա-քեր և ջրի վերաբերութեամբ:)

ա, Եւրոպան երկու պլիատոր ջրամբարներ ունի. Ալպեան սարերը և Ալաունեան բլրային շարքը՝ Վալդայեան բարձրաւան-գակի հետ:

Եւրոպայից արտաքին ջրարաշխին պատկանող գետերից և լճերից նշանաւորներն են՝ Պէջօրա, Հիւսիսային Դվինա գե-տերը, Վէնէր լիճը և Գօթա գետը, Վէժէր և Մէլառ լճերը, Սայմա լիճը և Վուօքսա գետը, Օնէգա լիճը և Սվիր գետը, Լազոկա լիճը և Նէվա գետը, Իլմէն լիճը և Վոլխով գետը, Չուդ կամ Պէյֆուս լիճը և Նարովա գետը, Արևմտեան Դվի-նա, Նէման, Վիսլա կամ Վիսթուլլա, Օդէր, Ելբա և Վէզեր

գետերը, կոստանցա կամ Բօդէն լիճը և Հռենոս գետը՝ աջակողմեան Մայն և ձախակողմեան Մօղէլ և Մասս վտակներով, Էսքոյ, Սէն, Լուառ, Ժիրոնդ կտմ Գարոն, Դուրո կամ Դուէրո, Թագօ, Կուազիանա, Կուադալկվիլիր և Երրօ գետերը. Ֆէնէլի լիճը և Ռոն կամ Հուոդանոս գետը՝ աջակողմեան Սօն վտակովը. Փօ գեա՝ ձախակողմեան Տէխնօ վտակովը, որ բղխում է Լագօ դի Մաջիօրէ ԼՇից, Դանուբ գետ՝ որ մեծութեամբ Եւրոպից երկրորդն է (Վոլգա), աջակողմեան Դրաւա և Սաւա, իսկ ձախակողմեան Թիսա և Պրուժ վտակներովը, Դնէսթր, Դնէպր՝ աջակողմեան Բէլէզինա և Պրիպէտ վտակներովը, Դոն, Կուբան և Թէյմլ գետերը:

— Ներքին ջրաբաշխի գետերից և լճերից նշանաւորներն են. Վոլգա գետը, որ Եւրոպից ամենաերկայնն է (3,000 վերստ) աջակողմեան 0կա և ձախակողմեան Քամա վտակներով: Ուրալ և Բէրէք գետերը և Կասպից լիճը (ծով): Ներքին լճերից նշանաւոր են նաև Կասպից ծովի հիւսիսային կողմերը գանուող աղով հարուստ շատ մանր լճակներ. Նորանցից ամենանշանաւորն է Էլժօն լիճը:

Եւրոպից գետերը քանի՞ գլխաւոր ջրամբարներ ունեն:

Այս գետերց ո՞րոնք են պատկանում Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի ջրաբաշխն և ո՞րոնք Ատլանտեան ովկիանոսին:

Նորանցեց Եւրաբանչերը ո՞ր ծովի մէջ է թափվում:

Գծագրել որ և եցէ գետի ջրաբաշխը:

Եւրոպից ամենաերկայն գետը ո՞ր կարգին է պատկանում:

Մի և նոյն յատկութեանը և նշանակութեանը ունե՞ն արդեօք երկու կարգի գետերը:

Ի՞նչ զանազանութեան կայ Սառուցեալ ովկիանոսում և Ատլանտեան ովկիանոսում թափուող գետերի մէջ՝ նաւարկութեան յարմաքութեան կողմից:

Ի՞նչ քանի՞ շնորհւ կաբելէ է մի գետից միւս գետը նաւել և մի ծովից միւս ծովը գնալ՝ ցամաքի ներսի կողմովը:

Եւրոպից ո՞ր կողմէն են Իմատը, Շաքհառողէն, Շտառւբախ և Գալաքնա ջրմէները:

ր, Ասիոյ գետերը երկու գլխաւոր ջրամբարներ ունեն. Մեծ ասիական սարահարթը և Փոքր ասիական սարահարթը:

Ասիոյ գետերի գլխաւոր յատկութիւններից մէկն էլ այն է, որ գրեթէ բոլորն էլ զոյդ զոյդ են հոսում. բղխում են միմեանց մօտ, հեռանում են իրարից բաւական ընդարձակ տարածութիւնով ու կրկին մօտենալով կամ միմեանց հետ խառնուելով, մի գետ են կազմում կամ թէ մի և նոյն ծոցն և ծովն են թափվում:

Ասիոյ արտաքին գետերից և լճերից գլխաւորներն են՝ Օր՝ ձախակողմեան Իրթիշ վտակովն, որ դուրս է գալիս Զայսանդ լՇից: Իրթիշը ընդունում է իւր մէջ Թօրօլ գետակը: Օրի ջրաբաշխը Ասիոյ մէջ ամենամեծն և աշխարհիս երկրորդն է (Ամագոնից յետոյ): Նիսիէյ՝ Ասիոյ ամենաերկայն գետը, ($1\frac{1}{2}$ անգամ երկայն է Վոլգայից). ոս աջ կողմից ընդունում է Անդարա վտակը, որ բղխում է Բայքալ լՇից (սուլր ծով), Լէնտ, Ամուր, Հօ—Հան—Հօ, կամ Դեղին, Յանցէքիանդ կամ Կապոյտ, Բրահմապուտրա, Գանգէս՝ աջակողմեան Զումնա վտակով. Ինդոս՝ ձախակողմեան Սէթլէջ վտակով, որ Մանասարօլար լՇիցն է բղխում: Ինդոս գետի ջրաբաշխի վերի մասը Փէնչոբը է կոչվում, որ նշանակում է հնգաշըւտն: Այս երկրը այսպէս է կոչվում, որովհետեւ այս տեղով հոսում են հինգ գետեր, որոնք միմեանց մէջ թափուելով կազմում են Ինդոս գլխաւոր գետը: Եփրատ և Տիգրիս՝ այս երկուոր իրենց ստորին ընթացքում միանալով, կոչվում են Շատ—իւլ—արաբ: Օրոնթ, Ոիօն, կամ Ֆասիս, ծորոփի և Ալիւս կամ Կըզըլ—Ըրմաք:

Ներքին ջրաբաշխի գետերից և լճերից գլխաւորներն են. Կուր՝ ձախակողմից ընդունում է Արագվա և Ալազան վտակները, Երասխ՝ ձախակողմից ընդունում է Ախուրեան (Արփաչոյ), Հրազդան կամ Զանգի սակագենն է առնում Սևանայ կամ Գեղարիայ լՇից, որը հարուստ է աղնիս գեղսբքունի, իշխան, կողակ և բախտակ ձկներով): Արփա, Որոսն և շատ ուրիշ վըտակներ: Երասխը խառնվում է Կուրի հետ, սոցա գետախառնունքը Զաւադ գիւղի մօտ է, այն տեղից մօտ 80 վերստ հոսե-

լով գէպի հարաւ՝ թափվում են կասպից ծովը։ Սիր-Դարիա
(Ենքսարդէս կամ Սի-Հուն), Ամռա-Դարիա (Զիհոն կամ Օքսո)՝
գետերը և Արալ ծովը։ Յորդանան գետը, Մեռեալ կամ Ասֆաւ-
տեան ծովը։ (Մեռեալ ծովը գոյացել է Սօգօմ ու Գօմը կոր-
ծանուած քաղաքների տեղը, կարծվում է որ նա հրաբղսային բե-
րան էր, որը լցուած է ջրով։ Նորա ջրի սաստիկ գոլորշեանալովը
լցումը մնում է միայն աղի, պղտոր ու թանձր ջուր, որի վե-
րայ լողում են ասֆալտի թանձր կտորներ։ Այս ծովում չե-
ապրում ոչ մի ջրային կենդանի։ Թարիմ գետը և Լօբ-Նոր լի-
ճը, Հիմէնդ գետը և Հիմունդ լիճը, Վանայ և Որմիայ (Կապու-
տան) լճերը։ (Վանայ լիճը նշանաւոր է տառեխ ձուկով։) Սոցա-
մէջ, Հայոց բարձրավանդակից, թափվում են շատ գետակներ։
Քանի՞ ուխաւոր ջրաբարեներ ու նեն Ասիոյ գետերը։

Այս աշխարհի գետերը ուրիշ լուսն յատկութիւն ունեն :
Ասիոյ արտաքին գետերեց որո՞նք են պատկանաւմ Սառուցեալ Ովկիա-
սով ջրաբաշխն :

Ա՞րոնք—Մեծ և ո՞լոնք Հնդկաց ովկիանոսի ջըաբաշխներէն։
Այս գետերց օրո՞նէր տարրուայ ամեն եղանակներում յարմար են հա-
զորդակցութեան և որո՞նք միան մի որոշեալ եղանակում։

ի՞նչ աեսակ երկերներից են անցնում Ասիոյ գետեր՝
Ո՞ր աշխարհի գետերը երենց նշանակութեամբը վեր են. Ասիոյ թէ եւ-
բռակլոյ:

— Ներքին գետերից և լճերից զլաւառներն են՝ Թանգառ
նայկա կամ Ռւջիջե, Նիանսիր և Զաթը լճերը։ Վերջնոյս մէջ
թափվում են Քօմադուկու, Ռւակուբէ և Շարի գետերն։ Ասլաս
յերանդ մէջ կան Նօթ Ճահճալճերն։

Ավրիկայի իւրաքանչիւր գետն իւլ առանձին ջրամբար
ունի. Նոցանից մի քանիսը ոսկիաբեր են և ընթացքները ընդ-
հատվում են (մանում են հողի ատկ և փոքր ինչ հեռուից դար-
ձեալ զուրս են գալիս):

Ավելի կայի աըտաքէն գետերէց ո՞ղոնք Են պատկանում Ատլանտա և
ո՞ղոնք Հնդկաց ովկիանոսներէ ջըաբաշխներէն:

Այս աշխարհն է գետերը աւելի կը տարածուեն ցամաքի մեջ ու քուկեցի գետերը։ Այս երկու աշխարհեց ո՞րը հարուստ է գետերով։

Ամերիկայի գետերի ջրամբարները կ'նշպէս են ընկած։ Այս աշխարհու Ամերիկայի գետերի ջրամբարները կ'նշպէս են ընկած։ Այս աշխարհու

գ, Ամբողքայի արտաքին գետերից և լճերից գլաւաւուն
ներն են՝ Քօլումբիա, Մէկէնզի գետերը, Վերծն գե-
տումը թափվում է Ամերիկակի, Մէծ Գերեաց և Մեծ Արջի
ՀՃերի աւելուրդ ջրերը։ Սասկաչաւան գետը՝ որ մանում է Մէծ
Վինիփէդ ՀՃի մէջ և միւս կողմից գուրս է գալիս Նէլսոն գետը
Սուրբ Լաւրենտիոս գետը՝ որ Վերին, Հուրօն, Միջիդան, Էրլ
